

# Սփիւռփահայ Նոր Պարբերական Մամուլը 1967-1980 թթ.ում (ՄԱՏԵՆԱԳԻՏԱԿԱՆ ՓՈՐՁ)

ԺԻՐԱՅՐ ԴԱՆԻԷԼԵԱՆ

1967-1980 թուականներուն լոյս տեսած հայ պարբերական մամուլի նոր անուններուն նուիրուած աշխատասիրութեան երկրորդ մասն է որ կը տրուի «Հայկագեան Հայագիտական Հանդէս»ի այս համարին մէջ: Առաջին մասը լոյս տեսաւ հանդէսի նախորդ համարով, որուն մէջ տեղ գտած էին «Ա»էն «Կ» տառերով սկսող պարբերաբերքերը<sup>1</sup>: Այժմ, երկրորդ մասով, կը ներկայացուին «Կ»էն «Ք» տառերով սկսող 121 պարբերական հրատարակութիւններ:

Աշխատասիրութեան աւարտին՝ «Յաւելուած» բաժինով, կը տրուի նկարագրութիւնը 16 նոր պարբերաբերքերու, որոնք պէտք էր տեղ գրաւած ըլլային առաջին մասին մէջ: Ինչպէս կը տեսնուի անոնց հրատարակութեան թուականներէն, անոնցմէ 12-ը սկսած է լոյս տեսնել միայն վերջին քանի մը տարիներուն (1980 թ. նախորդող), երբ Լիբանանը խրաժեղեց Երեսնամեակի դէպքերու մէջ, որոնց պատճառով արտաքին աշխարհին հետ յարաբերութիւն ունենալու եւ կապ պահելու հնարաւորութիւնները նուազագոյնի իջած էին: Տակաւին, հարկ է ընդունիլ որ մատենագիտական այս ցանկէն կրնան դուրս մնացած ըլլալ կարգ մը անուններ:

\*  
\*\*

ԿԱՄ (Բարիդ, Ֆրանսա, 1980 թ.) – Հանդէս վերլուծական, «ԿԱՄ-ի քարտուղար-պատասխանատունն է Մ. Նշանեան»: Թիւ 1-ը

1. Տես՝ Ժիրայր Դանիելեան, Սփիւռփահայ Նոր Պարբերական Մամուլը 1967-1980 թթ.ում, «Հայկագեան Հայագիտական Հանդէս», Ը: հոր., Պէյրութ, 1980, էջ 301-324:

լոյս կը տեսնէ՝ 1980 թուականին : Տպադրուած՝ Պէյրութ, տպարան «Ատլաս» : 292 էջ (17.5×24 սմ.) :

«Կամ»ի հրատարակութեան պարբերականութեան մասին՝ հանդէսի «Իրբեւ Յառաջարան» մուտքին մէջ կը գրուի . «ԿԱՄը պարբերական հանդէս մըն է առանց կանխորոշ պարբերականութեան : Հրատարակ պիտի գայ ան իր ներքին այժմէականութեան ռիթմովը, երբ հաւաքուած նիւթերը զգալի դարձնեն իրենց մէկտեղումին անհրաժեշտութիւնը : Եթէ չէ լրացուած այդ պայմանը՝ պիտի նախընտրէ բացակայիլ հրատարակէն» :

Իսկ իր ուղղութեան մասին՝ «Կամ» նոյն «Իրբեւ Յառաջարան»ին մէջ, բազմաթիւ հաստատումներու կարգին, կը գրէ .

«...ԿԱՄէն առաջ՝ Մեհեանը, Մեմֆը, Աեհկանը, Իւրաքան-չիւրը իր վայրին մէջ — 1914ի Պոլիսը, 1930ի Փարիզը, 1965ի Պէյրութը — եւ իր պայմաններով, փորձած են եւ ուզած են գրական Սերունդի մը հանդիսավայրը ըլլալ, անտեսելով կամ ընդունելով իրենց նախորդին նշանակութիւնը, ստանձնելով կամ մերժելով ինչ որ ինկած էր իրենց իրբեւ ժառանգ : Յղուելով ասոնց, իրբեւ իրենց օրինաւոր կամ ընկեցիկ ժառանգորդը, ԿԱՄը կը ներկայացնէ նախ ինքզինք իրբեւ գրական — եւ ընդհանուր կերպով՝ գրականութեան իրողութեան անդրադարձող — հանդէս մը» :

«Յղուելով հանդերձ ասոր եւ անոր՝ ԿԱՄը պատրաստ պատասխաններ չունի անշուշտ : Կրնայ թուել իր հետաքրքրութիւնները, իր հաւատքները, իր զարմանքները : Միայն այդքան» :

«Հետաքրքրութիւն՝ իմացական աշխարհի վերլուծական, հոգեվերլուծական, պատմա-վերլուծական ձեւերուն հանդէպ : Հաւատք՝ որ մշակութային խարսխումի տարրեր եղանակներուն ու եղանակաւորումներուն վերլուծումի վայր մը կրնայ ըլլալ Սփիւռքը... : Հետաքրքրութենէն ու հաւատքէն անդին՝ զարմանք մը : Զարմանալի է — բայց հաւանաբար ալ՝ բնականոն — հայազիտական ամպիրոններէն դրդուած աշխատասիրութիւններէն անդին՝ «ասաւոր լուծութիւնը» որ կը տիրէ : Զարմանալի է — բայց բնականոն — Սփիւռքի մէջ ապրող զանազան մտաւորականներու բացարձակ խակութիւնը, երբ խնդրոյ առարկայ է իրենց մտաւորականի դերը, տեղը, ճակատագիրը» :

«ԿԱՄ»ի առաջին աշխատակիցներն են՝ Զարեհ Որբունի, Գրիգոր Պըլտեան, Վ. Պէնիամին (Թարգմանաբար), Մ. Պլանշօ (Թարգմանաբար) եւ Մ. Նշանեան : Այս վերջինը՝ ստորագրած է Թէքէեանի նուիրուած աշխատասիրութիւն մը՝ «Վահան Թէքէեան, կամ՝ Անկարելի Անցքը», որ կը գրուէ «ԿԱՄ»ի առաջին համարին էջերուն գրեթէ կէսը :

**ԿԱՅԾԵՐ** (Լոնտոն, Անգլիա, 1978 թ.) – Եւրոպայի Հայ Ուսանողական Միութեան Լոնտոնի Մասնաճիւղի ամսաթերթ: Առաջին թիւը՝ 1978 թուականի Նոյեմբերին: 8 էջ (21×30 սմ.): Տարուերեոյ էջաթիւեր՝ 8–40: Իսկ թիւ 7էն սկսեալ՝ աւելի մեծ չափով (22.5×32 սմ.): Մեքենագիր, լուսապատճէնային տպագրութիւն:

Իր առաջին խմբագրականով՝ «Կայծեր» կը զբէ.

«Այս թերթը մեզ չի պատկանում. այլ պատկանում է բոլոր նրանց, որոնք կը զիտակցեն պատմական այս վայրկեանի ճակատագրական կարեւորութիւնը, եւ կը նետուեն պայքարի ընդհանուր հասանքի դէմ՝ հակադրելու բոնութեան, շահագործման եւ ճնշման ուժերին:

«Այս պայքարին ուժականութիւն տալու համար սփիւռքը կը պահանջի ՅԱՐՍՏԵԻ ՅԱՆԴԳՆՈՒԹԻՒՆ ԵՒ ՅԱՐՍՏԵԻ ՊԱՅՔԱՐ»:

**ԿԱՆՉ ՀՐԵՇՏԱԿԱՊԵՏԻՆ** (Չմմառ, Լիբանան, 1980 թ.) – Պարբերաթերթ Չմմառու Ս. Միքայէլեան Ընծայարանի: Խմբագրապետ՝ Յովսէփ Վրդ. Քէլէկեան: Խմբագրական կազմ՝ բաղկացած ընծայարանի սաներէն: 1980 թուականին լոյս կ'ընծայուի միակ համար մը՝ Նոյեմբերի 8ին: Լուսապատճէնային հրատարակութիւն: 43 թերթ (21.5×27 սմ.): Առաջին խմբագրականին մէջ կ'ըսուի.

«Երկար տարիներու լռութենէ ետք՝ վերջապէս լոյս կը տեսնէ Ընծայարանիս պարբերաթերթը, տարբեր անունի տակ, սակայն միեւնոյն նպատակին հետամուտ. ըլլալ արտայայտութիւնը Ընծայարանիս մշակութային ու հոգեւոր աճումին»:

**ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԵԱՆՔ** (Գահիրէ, Եգիպտոս, 1976 թ.) – Պարբերաթերթ: Գործադիր խմբագիր՝ Վահրամ Բրուտեան: Հրատարակութեան սկիզբը՝ 1976 թ.<sup>2</sup>: Սկիզբը՝ շարաթը անգամ մը, աւելի ուշ՝ երկու շարաթը անգամ մը, ապա՝ աւելի մեծ ընդմիջումներով, մինչեւ 1978 թ.ի Ապրիլ ամիսը: Թերթին բովանդակութիւնը կը կազմեն եգիպտահայ դաղութը յուզող հարցեր: Լոյս կը տեսնէ որպէս յաւելուած Հայկ Ժամկոչեանի «Իմացարան» պարբերագիրքին: 4–24 էջ (21×33 սմ.):

**ՀԱՅ** (Պրիւքսէլ, Պելճիքա, 1978 թ.) – Ամսական տեղեկատու Պրիւքսէլի Հայոց Վարչութեան: Պատասխանատու խմբագիր՝ Մեթր Էտուար Ժախեան: Առաջին համարը՝ 1978 թ.ի Մարտին: Մեքենագիր-բազմագրուած: 7–25 էջ (21×30 սմ.): Բացի պարբերաթերթի

2. Նախապէս ալ, 1971 թ.-ին, Գահիրէի ազգային-համայնքային ընտրութիւններուն առիթով, վահրամ Բրուտեան կը հրատարակէ «Համայնքային կեանք» ամուսնով պարբերաթերթը, առանց պետական արտոնագրի, որ շուտով կը դադրի:

անունէն, ոչ մէկ հայերէն յօդուած : Բովանդակութիւնը՝ Փրանսերէն :

ՀԱՅ ԱՐԻ (Աթէնք, Յունաստան, 1977 թ.) – Ամսաթերթ Յունաստանի Հայ Մարմ. Ընդհ. Միութեան Արիներու : Առաջին համարը՝ 1977 թ.ի Յունուարին : Մեքենագիր-բազմագրուած : 4 էջ (25·5×36 սմ.) :

ՀԱՅ ԱՐՁԱԳԱՆԳ (Սիտնի, Աւստրալիա, 1978 թ.) – Պարբերաթերթ : Հրատարակութիւն Սիտնիի Հայ Կաթողիկէ Եկեղեցիին : Խմբագիր-հրատարակիչ՝ Սարգիս Վրդ. Ուզունեան : Հրատարակութեան սկիզբը՝ 1978 թ.ի Յունուար : Հայերէն եւ անգլերէն : Տարուերորոշ էջեր, 20-40 էջ (21×26 սմ.) :

ՀԱՅ ԴԱՏ (Սիտնի, Աւստրալիա, 1975 թ.) – Պարբերաթերթ, ապա՝ ամսաթերթ : Կը հրատարակուի 1975 թ.ի վերջերէն : Հայերէն եւ անգլերէն : Խմբագիր՝ Մ. Վահանեան : Նուիրուած՝ Հայկական Դատին եւ յարակից հարցերու :

ՀԱՅ ԴՐԱՄԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ (Փիքօ Րիվերա, Գալ., ԱՄՆ, 1975 թ.) – Պարբերաթերթ : Հրատարակութիւն Հայ Դրամագիտական Ընկերակցութեան, հիմնուած՝ 1971 թ.ին : Հրատարակութեան սկիզբը՝ 1975 թ. : Տարին՝ հատոր մը : Խմբագիր՝ Եղիա Ներսէսեան : Առաջին հատորը (1975 թ.) կը բաղկանայ 25 էջէ, երկրորդը՝ 41 (1976 թ.), երրորդը՝ 48 (1977 թ.), չորրորդը՝ 167 (1978 թ.), սակայն հրատարակուած 1980 թ.ին : Հայերէն եւ անգլերէն : Մեքենագիր-բազմագրուած (21·5×28 սմ.) : Բովանդակութիւնը կը կազմեն դրագիտական յօդուածներ, դրամագիտական յօդուածներու եւ հրատարակութիւններու մատենագիտութիւն :

ՀԱՅ ԸՆՏԱՆԻՔ (Վենետիկ, Իտալիա, 1969 թ.) – Ամսօրեայ պարբերաթերթ Հայկական Սփիւռքի համար : Հրատարակութիւն Միխիթարեան Միաբանութեան, Սր. Ղազար, Վենետիկ : «Հայ Ընտանիք»ը վերափոխուած շարունակութիւնը կը հանդիսանայ 1947-1966 թուականներուն հրատարակուած «Միխիթարեան Ընտանիք»ին (1960-1962 թթ.) : Հայերէն եւ անգլերէն բովանդակութիւն, զեղատիպ ու գունատիպ : 32-60 էջ (21×28·5 սմ.) : Պատասխանատու խմբագիր՝ Վահան Վրդ. Յովհաննէսեան : Առաջին համարը՝ 1969 թուականի Յունուարին :

«Հայ Ընտանիք»ի առաջին համարով, ի մէջ այլոց, կը դրուի .

«Խմբագրութիւնը, գիտակից իր կոչումին, մտադրած է լայն-ցընել սահմանները իր թերթին, դպրոցական շրջանակէն ելլելով՝ մտնելու համար Հայ ընտանիքներու մէջ, տալ ազգային կեանքին եւ մշակոյթին ընդարձակ եւ արդիական պատկերը, ըլլալ առաջնորդ հայ

երիտասարդութեան մտքին եւ սրտին, տալով անոր գլխական ու գրական պահանջներուն գոհացում, ինչպէս նաեւ Հայ Գրականութեան եւ Պատմութեան, Հայ Լեզուի կարեւոր ծանօթութիւններ:

«Հայ Ընտանիք» թերթին գլխաւոր նպատակն է... օգտակար ըլլալ մեր նոր սերունդին, ուղղելով զայն դէպի ազգային զարգացումը՝ հայ լեզուի, հայ արուեստի, հայ պատմութեան եւ հայ գրականութեան մարդերուն մէջ, մտնելով բոլոր ընտանիքներէն ներս, ուր հասակ կը նետէ հայ մանկութիւնը՝ թէեւ օտար կլիմայի տակ բնաւ իր աչքերը: Հայ երիտասարդութեան կ'իյնայ վեր բռնել ջահը, լուսաւորել եւ առաջնորդել յաջորդաբար եկող ուրիշ սերունդներ, ծառայելու համար այսպէս հայկական դատին՝ նոր աշխարհի քաղաքական եւ ընկերային լոյսին տակ»:

ՀԱՅ ԿԵԴՐՈՆԻ ՏԵՂԵԿԱՏՈՒ (Պուէնոս Այրէս, Արժանթին, 1968 թ.) – Տեղեկատու երկչարթաթերթ, ապա՝ ամսաթերթ: Հրատարակութիւն Արժանթինի «Հայ Կեդրոն»ի Վարչական Սորհուրդի Մամուլի եւ Հաղորդումի Բաժինին: Հրատարակութեան սկիզբը՝ 1968 թ.: Ընդհանրապէս՝ սպաներէն: 8-16 էջ (20×29 սմ.): Պատասխանատու տնօրէն՝ Սամուէլ Էոնեստո Բազուպեան:

ՀԱՅ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆՆԵՐԻ ԸՆԴՀ. ՄԻՈՒԹԻՒՆ (Թեհրան, Պարսկաստան, 1979 թ.) – Ամսաթերթ: Հրատարակութիւն Հայ Համալսարանականների Ընդհ. Միութեան: Հրատարակութեան սկիզբը՝ 1979 թուականի Օգոստոս: Տրդ համարը կը բաղկանայ 16 էջէ (22×32 սմ.):

ՀԱՅ ԶԱՅՆ (Պէյրութ, Լիբանան, 1980 թ.) – Պարբերաթերթ: Հրատարակութիւն Թէքէեան Մշակութային Միութեան Ուսանողաց Բաժնի Մշակութային Յանձնախումբի: Առաջին թիւը, առանց հրատարակութեան թուականի եւ համարի, լոյս կը տեսնէ 1980 թուականի Հոկտեմբերին: Լուսապատճենային հրատարակութիւն: Առանց էջաթիւի՝ 27 թերթ (21×33 սմ.): Երկրորդ թիւ մը՝ նոյն տարուան Դեկտեմբերին, բաղկացած՝ 27 էջէ (22×28 սմ.): Աշակերտներէ բաղկացած խմբագրական կազմ՝ Վաչէ Ղազարեանի հսկողութեամբ:

«Մուտքի Համար» խորագրուած առաջնորդող յօդուածը կ'ըսէ.

«Լոյսին բերելով այս պարբերաթերթին առաջին թիւը, Թ. Մ. Մ. ի Ուսանողաց Բաժնի Մշակութային Յանձնախումբը... կը ձգտի հայկական երկրորդական վարժարաններու պարմանիներուն եւ պարմանուհիներուն մէջ բորբոքելու գլխին ու մշակոյթին սէրը, անոնց մէջ արմատաւորել ջանալով հայու իրապաշտ ու դրապաշտ հպարտութիւնը, որուն կարիքն ունինք... Սփիւռքի բովանդակ տարածքին»:

Հ.Մ.Ը.Մ ՏԵՂԵԿԱՏՈՒ (Երուսաղէմ, Պաղեստին, 1980 թ.) — Հ.Մ.Ը.Մ-ի Երուսաղէմի Մասնաճիւղի պաշտօնաթերթ: Առաջին համարը լոյս կը տեսնէ 1980 թ-ի Մարտին, երկրորդը՝ Ապրիլին, ապա՝ «Հ.Մ.Ը.Մ. Տեղեկատու»ն լոյս կը տեսնէ ընդհանրապէս երկու ամիսը անգամ մը: Առաջին համարին խմբագիրը կը հանդիսանայ Արրահամ Սիւրդիւքեան: Ապա՝ Թերթը կը հրատարակուի խմբագրական մարմինի մը կողմէ — Ճօրճ Կիւլլէքճեան, Կարօ Հէքիմեան, Օհան Կիւրեղեան: Հինգերորդ համարէն (Սեպտեմբեր, 1980) սկսեալ խմբագիր կը դառնայ՝ Կարօ Հէքիմեան: Պաշտօնաթերթի 7-րդ համարէն սկսեալ՝ անգլերէն բաժին մը՝ Արրահամ Սիւրդիւքեանի պատասխանատուութեամբ: 8-40 էջ (21×30 սմ.): Ազգային, մարզական եւ մշակութային բովանդակութեամբ՝ Հ.Մ.Ը.Մ-ի պաշտօնաթերթը, Ա. տարուան 6-րդ համարով (Հոկտեմբեր-Դեկտեմբեր, 1980) կ'ունենայ զրական բաժին:

«Հ.Մ.Ը.Մ. Տեղեկատու»ի առաջին համարի խմբագրականը կը նշէ.

«Ձոր տարիներ առաջ որոշեցինք հրատարակել Հ.Մ.Ը.Մ-ի Տեղեկատուն: Չկրցինք: Մեզի վիճակուեցաւ 1980 տասնամեակի սեմին լոյս գալ: Տարօրինակ զուգադիպութեամբ մը, որովհետեւ, հակառակ մեծ ու փոքր դժուարութիւններուն որոնք աշխարհի գըլխուն կը բարդուին, մեզի այնպէս կը թուի, թէ 1980-ի տասնամեակին աշխարհը Հայկական հարցով որեւէ մէկ շրջանէ աւելի պիտի զբաղի: Անշուշտ հայութիւնով զբաղիլը եւ Հայկական հարցը տարբեր բաներ են: Բայց զբաղիլն ալ մեծ քայլ մըն է դէպի յառաջ...:

«Մենք, աշխարհի կարեւոր կեդրոններէն մէկուն անկիւնը մնացածներս, չենք կրնար ձեռնածալ մնալ հայ զարթօնքին: Հոս ենք, միջոցները եւ առիթները ի հարկին ստեղծելով, կը ձայնակցինք մեր ժողովուրդի մակընթացութեան, ջերմօրէն յուսալով որ, այս անգամ մեր երազներուն ափերուն պիտի հասնինք անպայման»:

ՀԱՅ ՇԱՐԺՈՒՄ (Ֆրեզնօ, ԱՄՆ, 1979 թ.) — Հրատարակութիւն Քալիֆորնիոյ Նահանգային Համալսարանի (Ֆրեզնօ) Հայ Ուսանողակուսն Կազմակերպութեան: Անգլերէն լեզուով հրատարակութիւն մը, որ տեղ կու տայ նաեւ հայերէն լեզուով գրութիւններու: Առաջին համարը լոյս կը տեսնէ 1979 թուականի Ապրիլի 24ին: 4-12 էջ (29×35.5 սմ.): Խմբագիրներ՝ Մարք Մալխասեան, Պիլ Էրիսեան եւ Մարք Նաճարեան: Ապա՝ Ֆլօրա Չատըճեան եւ Սինթիա Աւագեան: Խորհրդատու՝ Տիգրան Գուլումճեան:

ՀԱՅ ՊԱՅՔԱՐ (Բարիզ, Ֆրանսա, 1977 թ.) — Ամսաթերթ: Խմբագիր՝ Արա Թորանեան: Առաջին համարը, անթուակիր, լոյս կը

տեսնէ 1977 թուականի Մարտին: Հակառակ առաջին համարէն սկսած անուանաթերթին վրայ հայերէնով մեծատառ ՀԱՅ ՊԱՅՔԱՍԻ դոյու-  
թեան, միայն 15րդ համարէն սկսեալ թերթը կ'ունենայ քանի մը էջ  
հայերէն: Հայաստանի Ազատագրութեան Հայ Գաղտնի Բանակի գոր-  
ծունէութեան եւ հազորագրութիւններուն մեծ տեղ կը տրամադրէ:  
8-28 էջ (30×42.5 սմ.):

«Հայ Պայքար»ը կ'ուզէ ըլլալ պայքարի զէնք մը՝ ի ծառա-  
յութիւն Հայ Դատին, որուն լուծումը կ'ենթադրէ՝ Թուրքիոյ կողմէ  
բունազրաւուած հողերու ազատագրում, հայ ժողովուրդի վերախըմ-  
բաւորումը վերամիաւորուած հայրենիքի մը սահմաններուն մէջ, եւ  
իրաւունքը՝ ազատօրէն տնօրինելու իր ճակատագիրը»<sup>3</sup>:

ՀԱՅ ՍԿԱՍԻՏ (Պէյրութ, Լիբանան, 1975 թ.) — Պարբերաթերթ  
Հ.Մ.Ը.Մ.ի Շրջանային Սկսուտական Խորհուրդի, Պէյրութ, Լիբա-  
նան: Առաջին համարը լոյս կը տեսնէ 1975 թ.ի Յունուարի մէկին,  
48 էջ, Բ. թիւը՝ 1977 թ.ի Մայիսի 28ին, 64 էջ, Գ. թիւը՝ 1980 Յուն-  
ուարին, 48 էջ: (20×27 սմ.): Պատասխանատու եւ վարիչ խմբագիր՝  
Կարօ Թիւթիւնճեան: Ունի նաեւ խմբագրական մարմին մը:

Առաջին թիւով՝ Հ.Մ.Ը.Մ.ի Շրջանային Վարչութեան «Ող-  
ջոյնի Խօսք»ին մէջ կ'ըսուի.

«...Լիբանանի երկնակամարին տակ, Հ.Մ.Ը.Մ.ի Շրջ.  
Սկսուտական Խորհուրդի նախաձեռնութեամբ եւ խումբ մը սկսուտ-  
ներու խանազավառութեամբ՝ կ'իրագործուի ահա մշտանորոգ մեր  
միութեան տարիներու երազներէն այս մէկն ալ, — Սկսուտական  
Պաշտօնաթերթը»:

ՀԱՅԱՍՏԱՆ (Պէյրութ, Լիբանան, 1980 թ.) — Պաշտօնաթերթ  
Հայաստանի Ազատագրութեան Հայ Գաղտնի Բանակի: Առաջին հա-  
մարը՝ թիւ 0, Հոկտեմբեր 1980 թուակիր: 40 էջ (30×48 սմ.): Երկ-  
րորդ համարը՝ թիւ 1-2, լոյս կը տեսնէ 1980 թ.ի Դեկտեմբերի թուա-  
կանով, չափի ու ծաւալի փոփոխութեամբ: 48 էջ (24×34 սմ.)<sup>4</sup> Թէեւ  
պարբերաթերթին վրայ նշուած չէ՝ սակայն «Հայաստան» լոյս կը  
տեսնէ ամսագրի պարբերականութեամբ, երբեմն միացեալ թիւերով:  
Առաջին համարին մէջ հայերէնի կողքին, կ'օգտագործուին անգլերէն  
եւ արաբերէն լեզուները: Հետագային՝ կ'աւելնան նաեւ ֆրանսերէնը,  
իտալերէնը եւ ռուսերէնը:

Վերոյիշեալ զոյգ թիւերուն մէջ «Հայաստանի» հրատարակու-

3. Թարգմանուած ֆրամսերէնէ:

4. Աւելի ուշ՝ 1981 բուսականի Յունուարէն սկսեալ հրատարակուած քիւսքը  
ունեցամ տարբեր չափ եւ էջաթիւ՝ 68-128 էջ (20×27.5 սմ.):

թեան մասին ոչ մէկ բացատրութիւն: Աւելի ուշ<sup>5</sup>, «Ինչո՞ւ «Հայաստան» Պարբերաթերթը» խորագրուած գրութեան մէջ, կը տրուի բացատրութիւնը:

«Տասնեակ տարիներ շարունակ, սփիւռքահայր ազատ արտայայտուելու դիտակէտէն անկարելիութեան դատապարտուած էր, որովհետեւ բոլոր «պաշտօնական» թերթերը ենթակայ էին կուսակցութիւններու զրաքննութեան, իսկ մնացեալները հալածանքի ենթարկուած նոյն այս կուսակցութիւններուն կողմէ:

«Երբ Հայաստանի Ազատագրութեան Հայ Գաղտնի Բանակը ձեռնարկեց իր պայքարին, մինչ միջազգային մամուլը լայնօրէն կ'անդրադառնար հայկական զինուորական գործողութիւններուն, սփիւռքահայ «պաշտօնական» մամուլը սահմանափակ տեղ կը շնորհէր, որովհետեւ անգամ մը եւս կուսակցութիւններուն զրաքննութիւնը միջամտած ու զեղծած էր ճշմարտութիւնը:

«Այս... ընթացքին վերջ տալու համար ու հայ ժողովուրդին ձայնը ըլլալու նախանձախնդրութեամբ, Հ.Ա.Հ.Գ.Բ.-ը կը զգայ «ՀԱՅԱՍՏԱՆ» պարբերաթերթին հրատարակումի ու ցրումի անուրանալի օգտակարութեան, մասսան յեղափոխականացնելու տեսակէտէն»:

ՀԱՅԱՍՏԱՆԻԵՍ (Լոս Անճեղս, ԱՄՆ, 1978 թ.) — Գրականութեան եւ արուեստի լրատու: Կիսամսեայ թերթ: Խմբագիր՝ Հենրիկ Անասեան: Հրատարակիչ՝ Վ. Ն. Նազարեան: Հրատարակութեան ըսկիզբ՝ 1978 թ.ի Հոկտեմբերի 1: Առաջին թիւերը՝ 4 էջ, ապա՝ 8 եւ աւելի (29×43 սմ.): Շրջան մը անկանոն լոյս տեսնելէ եւ կարճ դադարէ մը ետք, խմբագրի, բովանդակութեան եւ էջաթիւի փոփոխութիւններով՝ կը սկսի լոյս տեսնել որպէս մշակութային եւ ազգային պարբերաթերթ, պահելով հանդերձ «Արուեստի եւ գրականութեան լրատու» ենթախորագիրը: Առաջին խմբագրին՝ Հենրիկ Անասեանի արեւելահայ ըլլալը (Հայաստանէն արտագաղթած), պատճառ կը հանդիսանայ որ թերթը սկզբնական շրջանին լոյս տեսնէ արեւելահայերէնով: Այժմ՝ դադրած:

«Սրտի Խօսք՝ Մեր Ընթերցողներին» խորագրուած առաջին խմբագրականով՝ «Հայարուեստ» կը դժէ իր ուղին հետեւեալ բառերով:

«... «Հայարուեստ»-ը նպատակ ունի լուսարանել Մայր Հայրենիքի եւ Սփիւռքի երաժշտական եւ, ընդհանրապէս, արուեստի շարժուն կեանքը: Լուսարանել՝ բոլորին հասկանալի, մատչելի լեզուով ու շարագրութեամբ: Առանձին արուեստագէտների նուիրուած յօդ-

5. «Հայաստան», 1981, թիւ 3-4 (Յունուար-Փետրուար), էջ 8:

ուածներն ու ակնարկները հետու կը լինեն զուտ արուեստագէտի համար նախատեսուած լինելուց» :

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՁԱԳԱՆԳ (Մոնթրէալ, Գանատա, 1969 թ.) — Ամասիան լրատու Հայ Աւետարանական Առաջին Եկեղեցիի: Խմբագրական կազմ: Պատասխանատու խմբագիր՝ Վեր. Յովհաննէս Ակնեբեան: Մեքենագիր-բաղմագրուած: 8-10 էջ (21.5×28 սմ.):

ՀԱՅԴՈՒԿ (Լոս Անճելըս, ԱՄՆ, 1978 թ.) — Պաշտօնաթերթ Արեւմտեան Ամերիկայի Հայ Յեղափոխական Դաշնակցութեան Հայ Երիտասարդաց Դաշնակցութեան: Հրատարակութեան սկիզբ՝ 1978 թուականի Մայիս: 8-20 էջ (21.5×28 սմ.): Հայերէն եւ անգլերէն բովանդակութիւն:

ՀԱՅԴՈՒԿ (Նիկոսիա, Կիպրոս 1979 թ.) — Տեղեկատու Հայ Դատի Պաշտպաններու: Հրատարակութեան սկիզբ՝ 1979 թուականի Ապրիլ: Մեքենագիր-բաղմագրուած: 8-16 էջ (21×33 սմ.):

«Անճնուրաց Հայորդիք» խորագրուած կոչով մը՝ «Հայրուկ»ի Ա. թիւին մէջ կ'ըսուի.

«Հայրուկը օրկանն է Հայ Դատի Պաշտպաններուն:

«Հայրուկի առաքելութիւնը Հայ Դատին զործնական ձեւով հետապնդումն է ու մեր հողերուն վերադարձը մեզի»:

ՀԱՅՏՐԷՆ ԿԱՐԴԱՆ (Աթէնք, Յունաստան, 1971 թ.) — Տարեգիրք Հ. Բ. Ը. Միութեան Արթագի Գալիաքեան Վարժարանի: Խմբագիր՝ Վարժարանի տնօրէն Չաւէն Գրիգորեան: Առաջին հատորը լոյս կը տեսնէ 1971 թուականին, 118 էջ, իսկ երկրորդ մը՝ 1974 թուականին, 80 էջ (17×24 սմ.): Մեքենագիր-բաղմագրուած:

ՀԱՅԿԱԶԵԱՆ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԻՄ (Պէյրութ, Լիբանան, 1970 թ.) — Հրատարակութիւն Հայկազեան Գոլէճի Հայազիտական Ամբիոնի: Խմբագիր՝ Երուանդ Հ. Քասունի: Առաջին հատորը լոյս կը տեսնէ 1970 թուականին: Մինչեւ 1974 թ. լոյս կը տեսնէ 5 հատոր: Ապա՝ Լիբանանի դէպքերուն պատճառով, վեցերորդ հատորը լոյս կը տեսնէ 1977-1978 թուահամարներով: Եւ անկէ ի վեր կը շարունակէ լոյս տեսնել տարին հատոր մը: Մինչեւ 1980 թ. լոյս տեսած հատորներուն թիւը ութն է: Առաջին հատորը եթէ կը բաղկանար 236 էջէ, հետզհետէ, նոր աշխատակիցներու ապահովումով, «Հայկազեան Հայազիտական Հանդէս»ի էջերը կը հասնին մինչեւ 396ի (17×24 սմ.): Կարճ ժամանակի մէջ, հայազիտական այս հանդէսը, իր զիտական մակարդակով ու լրջութեամբ կը հանդիսանայ ժամագրավայրը հայազիտութեան տարբեր ընաչաւառններով հետաքրքրուող մեր մտաւորականներու: Ան կը յաջողի հաւասարապէս ապահովել հայրենիքի թէ

արտասահմանի աշխատակիցներու մասնակցութիւնը՝ միշտ անտիպ աշխատասիրութիւններով: Եւ, մանաւանդ, ան կը յաջողի, երէց ու միջին սերունդի մտաւորականներու մասնակցութեան կողքին, քաջալերել երիտասարդ սերունդի ներկայացուցիչներուն մասնակցութիւնը:

«Հայկազեան Հայազիտական Հանդէս»ին իրենց աշխատակցութիւնը բերած են՝ Մօրուս Հասրաթեան, Վարդէս Համազասպեան, Ա. Տէր Ղեւոնդեան, Գէորգ Խըրոփեան, Բագրատ Ուլուբաբեան, Լեւոն Խաչիկեան, Արմէն Զարեան, Մուրատ Հասրաթեան, Ա. Ծ. Մնացականեան, Փասգալ Փապուճեան, Աշոտ Պատմազրեան, Տիգրան Գոյոյումճեան, Յ. Ճ. Սիրունի, Զարեհ Պտուկեան, Լեւոն Գ. Մինասեան, Սարգիս Ճելվահրճեան, Վահէ Օշական, Լեւոն Վարդան, Պերճ Սապպաղեան, Յրթ. Գալաթեան, Ասպետ Տօնապետեան, Արտաշէս Տէր Խաչատուրեան, Զաւէն Մսրըլեան, Աւետիս Սանճեան, Պերճ Կարապետեան, Մանուէլ Ժինպաշեան, Պարոյր Աղպաշեան, Ժիրայր Դանիէլեան, Շահէ Տէր Գէորգեան, Արշաւիր Գապպէնճեան, Յակոբ Աւետիքեան, Մինաս Գոճայեան, Սեդա Պարսումեան-Տատոյեան, Երուանդ Հ. Քասունի, եւ ուրիշներ:

«Հայկազեան Հայազիտական Հանդէս»ին մէջ յաճախ լոյս կը տեսնեն նաեւ Քրանսերէն եւ անգլերէն հայազիտական ուսումնասիրութիւններ:

«Հայազիտական Հանդէս»ի առաջին հատորին սկիզբը՝ «Որպէս Մուտք» խորագրուած էջով, խմբագրութիւնը հետեւեալ տողերով կը բանաձեւէ իր առաքելութիւնը.

«Կը հաւատանք նման հանդէսի մը գոյութեան անհրաժեշտութեան եւ իրաւունքին: Ինչպէս կը հաւատանք նաեւ որ կարելի է զայն ժամադրաւայրը դարձնել հայազիտական տարբեր բնազաւառներով պարապող մեր մտաւորականներուն:

«ՀԱՅԿԱԶԵԱՆ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍԻ հրատարակութիւնը վստահօրէն առաւել եւս պիտի հրահրէ հայազիտութեան հանդէպ վերջերս ցոյց տրուած հետաքրքրութիւնն ու խանդավառութիւնը, ինչպէս եւ պիտի խթանէ ոմանք՝ ձեռնարկելու նոր պրպտումներու եւ հետազոտութեանց, իրենց մասնագիտութեան դժով: Արտասահմանի մէջ ուժերը չէ որ կը պակսին, ոչ ալ միջոցները: Անկասկած որ նաեւ կը ցանկանք հայրենի մտաւորականներու գործակցութիւնը:

«ՀԱՅԿԱԶԵԱՆ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍԻ էջերը բաց կը մնան բոլոր անոնց, որոնք զիտեն գիտական հիմքերու վրայ նետուած եւ առարկայօրէն ներկայացուած խօսքին արժէքը»:

ՀԱՅԿԱԿ (Նիւ Եորք, ԱՄՆ, 1979 թ.) — Հրատարակութիւն Ամերիկահայոց Արեւելեան Թեմի Ազգային Առաջնորդարանի, գործակ-

ցարար Այգային Ուսումնական Խորհուրդին: Անթուակիբ, սակայն լոյս տեսած՝ 1979 թուականի Մայիսին, Յակոբ Պարսումեանի խմբադրութեամբ: 24 էջ (21·5×28 սմ.): Լոյս տեսած՝ մէկ թիւ: Բովանդակութիւնը՝ ամէնօրեայ եւ միօրեայ դպրոցներու աշակերտներու փորձ-գրութիւններ:

ՀԱՅԿԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ (Ժընեւ, Զուիցերիա, 1975 թ.) — Տեղեկատու «Զուիցերահայ Երիտասարդութիւն» կազմակերպութեան: Այս պարբերական հրատարակութեան մասին Զուիցերիոյ Հայոց Միութեան «Յոլք» տեղեկատուն կը գրէ. «...Միութիւնս ամէն ամիս կը հրատարակէ եւ ըստ երիտասարդներուն կը բաժնէ «Հայկական Լուրեր» տեղեկատուն, որ զանազան հայ դաշնութիւններէ հետաքրքրական լուրեր կը պարունակէ»<sup>6</sup>:

ՀԱՅԿԱԿԱՆ ՆԻՒԹԵՐ (Աթէնք, Յունաստան, 1975 թ.) — Ամսաթերթ: Հրատ. Աթէնքի հայ ուսանողներու: Բովանդակութիւնը՝ յունարէն, միայն երկու էջ հայերէն: Հրատարակութեան սկիզբ՝ 1975 թուականի Փետրուար: Լոյս տեսած՝ 13 թիւ: Մեքենագիր-բազմադրուած: 16 էջ (21×29 սմ.)<sup>7</sup>:

ՀՍՅՈՐԴԻ (Պուէնոս Այրէս, Արժանթին, 1970 թ.) — Աշակերտական պարբերաթերթ Խրիմեան Կրթական Հիմնարկութեան Ճամպոլեան Երկրորդական Վարժարանի: Հրատարակութեան սկիզբ՝ 1970 թ.ի Ապրիլ: Մինչեւ Օդոստոս՝ լոյս կը տեսնէ 5 թիւ: Մեքենագիր-բազմադրուած: 8-18 էջ (22×28 սմ.): Կը բովանդակէ աշակերտական գրութիւններ եւ տեղեկութիւններ վարժարանի մասին:

ՀԱՎ (Աուքար, Լիբանան, 1976 թ.) — Աշակերտական հանդէս Հայկական Առժամեայ Վարժարանի: Առաջին եւ միակ համարը լոյս կը տեսնէ 1976 թ.ի Փետրուարին. «Թիւ 1, Փետրուար 1976»: Մեքենագիր-բազմադրուած: 28 էջ (22×28 սմ.): Աշակերտներէ բաղկացած խմբադրական կազմ. Թալին Մալիքեան, Վերա Գարբիէլեան, Գոհար Պալիքեան, Յոլինէ Շամլեան, Արա Աւետիքեան:

Լիբանանի 1975 թ.էն սկսած դէպքերուն պատճառով, Նշան Փալանճեան վարժարանի պատասխանատուներ եւ ուսուցիչներ, Անթիլիասի մօտակայքը զանուող Աուքարի շրջանին մէջ կը ստեղծեն Հայկական Առժամեայ Վարժարանը (ՀԱՎ), որուն կ'աշակերտին

6. «Յոլք», Ժընեւ, 1976, քիւ 2 (Մարտ), էջ 11:

7. «Հայկական Նիւքթեր» մասին այս տեղեկութիւնները քաղուած են հետեւեալ աղբիւրէն. «Վակնցի», Ուրուադիժ Յունահայ Գաղութի Լրագրութեան, «Նոր Աշխարհ» (Աթէնք), 1981, քիւ 57 (5 Մայիս), էջ 4:

յատկապէս Ն. Փալանճեան վարժարանի աշակերտները: ՀԱՎ-ը տարուան մը կեանք կ'ունենայ: Հոս է որ Աշակերտական Միութեան կողմէ լոյս կ'ընծայուի «ՀԱՎ» հանդէսի միակ թիւը:

ՀԵՄ (Երուսաղէմ, Պաղեստին, 1977 թ.) — Եռամսեայ: Պաշտօնական հրատարակութիւն Հայ Երիտասարդաց Միութեան [ՀԵՄ]: Առաջին համարը՝ «Նոր Շրջան — Ա, Յունուար-Մարտ, 1977, թիւ 1»: Խմբագրական մարմին՝ Ալեքս Գալայճեան, Ներսէս Ներսէսեան եւ Յարութիւն Սամուէլեան: Երրորդ համարէն սկսեալ՝ Ալեքս Գալայճեան եւ Ներսէս Ներսէսեան: Աւելի ուշ՝ Ալեքս Գալայճեան, Վարդան Տէր Վարդանեան, Վարուժան Տիրատուրեան, Լիպարիտ Պետրոսեան եւ Յակոբ Փանոսեան: Գրական, մշակութային եւ տեղեկագրական բովանդակութիւն: 20-48 էջ (16×22 սմ., ապա՝ 14×20.5 սմ.)<sup>8</sup>:

«ՀԵՄ» Եռամսեայի Նոր Շրջանը՝ խորագրուած առաջին խմբագրականին մէջ՝ կը ներկայացուին եռամսեային լոյս ընծայուածին գլխաւոր դերագլխատնտեսները.

«Հ. Ե. Միութիւնը իր ետին ունի մշակութային, մարդական, սկաւտական ու ընկերային գործունէութեան իրապէս պատուաբեր վաստակ մը...: Այդ գործունէութեան նոր շեշտ եւ երանդ պիտի տայ «ՀԵՄ» եռամսեան, որուն շուրջ պիտի խմբուին, կը յուսանք, մեր պատանիներն ու երիտասարդները: Ան հետեւաբար երիտասարդներուն բեմը պիտի ըլլայ...:

«Միւս կողմէ, տարիներէ ի վեր զգացուող անհրաժեշտութեան մը պատասխանն է «ՀԵՄ»ը: Այդ անհրաժեշտութիւնը՝ Երուսաղէմի Միութեան եւ աշխարհի չորս կողմը ցրուած նախկին ՀԵՄականներու միջեւ շօշափելի կապ մը ստեղծելու դիտակցութիւնն էր...: «ՀԵՄ»ը այդ պիտի ընէ. այսինքն, պարբերաբար մեր բոլոր ընկերներուն պիտի յուշէ Երուսաղէմի Հ. Ե. Միութեան աշխատանքներուն եւ կեանքին մասին, տեղեկութիւններ պիտի տայ, ընկերական կապ մը պիտի ստեղծէ ու պահէ»:

Հին, ՇԱՏ Հին ՄԵՂԵԴԻՆ (Նիկոսիա, Կիպրոս, 1973 թ.) — Պարբերագիրք Մելգոնեան Կրթական Հաստատութեան: Բացառիկ թիւ՝ նուիրուած Շահան Շահնուրի ծննդեան 70-ամեակին: Խմբագրական կազմ՝ բաղկացած աշակերտներէ, առաջնորդութեամբ հայ գրականութեան ուսուցիչ՝ Մանուէլ Քէօսէեանի: Մեքենագիր-բազմադրուած: Առանց էջաթիւի, 78 էջ (16×20 սմ.):

8. Նոյն Միութիւնը 1940-1945 բուականներուն հրատարակած է նոյն անունով եռամսեայ մը, Աւտիս Սանեանի խմբագրութեամբ:

ՀՈԿՏԵՄԲԵՐ (Գահիրէ, Եգիպտոս, 1974 թ.) – Ժողովրդային շարաթաթերթ. գրական, մշակութային եւ մարզական: Հրատարակուելին Նիւր Իսթ Հայկական Ակումբի: Խմբագիր՝ Հայկ Մ. Ժամհոջեան: Արտօնատէր՝ Գառնիկ Յ. Յակոբեան:

Բաղմաթիւ անյաջող փորձերէ ետք, Եգիպտոսայ մտաւորական Հայկ Ժամհոջեան, 1973 թ.ի Հոկտեմբերի պատերազմէն կարճ ժամանակ անց, կը յաջողի ձեռք ձգել «Հոկտեմբեր» անունով թերթի մը արտօնազիրը, օժանդակութեամբ Գահիրէի Նիւր Իսթ Ակումբին ու անոր ատենապետին՝ Գառնիկ Յակոբեանի, որ կը դառնայ թերթին արտօնատէրը: «Հոկտեմբեր»ի առաջին թիւը լոյս կը տեսնէ 1974 թ.ի Նոյեմբեր 30ին, հայերէն եւ արաբերէն բովանդակութեամբ, 6 էջ (29×45 սմ.): Թէեւ շարաթաթերթ, մինչեւ 1975 թ.ի Ապրիլ ամիսը լոյս կը տեսնէ միայն 4 համար: Հայկ Ժամհոջեանի կողքին, թերթի խմբագրական աշխատանքներուն կը մասնակցին Յակոբ Շահնուր (Սմաթեան), Միրտիչ Անդրանիկ (Բեմպեճեան) եւ Վահրամ Բրուտեան:

Չորս թիւ լոյս տեսնելէ ետք՝ «Հոկտեմբեր» կը դադրի: Արտօնատէր Գ. Յակոբեան թերթի խմբագրութիւնը կը վստահի նորաստեղծ «Մեծ Եղեռնի 60ամեակի Երիտասարդաց Մարմին»ին, անուանական խմբագրապետութեամբ Շաֆիք Մորքոս Հաննայի: Խմբագրական կազմը յաճախ փոփոխութիւններու կ'ենթարկուի, սակայն ընդհանրապէս հետեւեալներէն կը բաղկանայ. Վարուժան Գաղանճեան, Վազգէն եւ Գէորգ Բրուտեան, Նորա Երզնկացեան, Թովմաս Ջաքարեան, եւ ուրիշներ:

«Նոր Երջան»ի առաջին համարը լոյս կը տեսնէ 1975 թ.ի Նոյեմբերի 15-ին, որպէս «Երիտասարդական ամսաթերթ՝ ընկերային, մշակութային եւ մարզական», նախկին ծաւալով, եւ կրկին հայերէն եւ արաբերէն բովանդակութեամբ: Այսպէս կը շարունակուի մինչեւ 23րդ համարը (1977 թ. Հոկտեմբեր): Իննամսեայ ընդմիջումէ մը ետք, «Հոկտեմբեր» ամսաթերթը կը վերահրատարակուի, այս անգամ նոր տարազով՝ պարբերապիւրքի ձեւով (21×33 սմ.):

«Նոր Երջան»ի առաջին համարով (թիւ 5), «Մեր Ուղղութիւնը» խորագրին տակ՝ Երիտասարդ խմբագիրները կը գրեն.

«Մեծ Եղեռնի 60-ամեակի Երիտասարդաց Մարմինը, հիմնուած Մեծ Եղեռնի առիթով, իրեն որպէս նշանաբան ընտրած է հետեւեալ երեք բառերը, «Համերաշխութիւն, Համադորձակացութիւն եւ Միասնականութիւն»: Երիտ. Մարմինը, իր համեստ ուժերով, պիտի ջանայ եգիպտոսայ Երիտասարդութեան մէջ արթնցնել հայրենիքի սէրը, հրահրել հայկականութեան զգացումը եւ ամրապնդել կապը իր մայրենի լեզուին եւ հայրենիքին հետ»:

ՀՈՎԻՏ (Էնտինօ, Գալիֆորնիա, ԱՄՆ, 1980 թ.) — Հրատարակուած թիւն Սրբոց Նահատակաց Եկեղեցիի: Հոգեւոր հովիւ՝ Պարոյր Վրդ. Էքմէքճեան: Հրատարակուած թիւն սկիզբ՝ 1980 թուական: 1980 թ. Սեպտեմբեր-Ռեկտեմբեր թուակիր համարը կը բաղկանայ 23 էջէ (21·5×27 սմ.): Հայերէն եւ անգլերէն բովանդակուած թիւն:

ՀՈՐԻՁՈՆ (Մոնթրէալ, Գանատա, 1979 թ.) — Շարաթաթերթ՝ [ազգային, դրական, քաղաքական]: Պաշտօնաթերթ Հ. Յ. Դաշնակցութեան Գանատայի շրջանի: Հրատարակուած թիւն սկիզբ՝ 1979 թ. Մայիսի 28: Խմբագրական կազմ՝ «Հորիզոն» կը հանդիսանայ Գանատահայ զաղութիւն երկրորդ շարաթաթերթը, «Ապագայ»ին հետ: 8-12 էջ (30×44·5 սմ.):

«Հորիզոնէ ... «Հորիզոն» խորագրուած առաջին խմբագրականով՝ «Հորիզոն» շարաթաթերթը հետեւեալ տողերով կը բանաձեւէ իր առաջելութիւնը:

«Հիւսիսային Ամերիկայի ցամաքամասին վրայ լոյս տեսնող «ՀՈՐԻՁՈՆ»-ը, իրրեւ հետեւակ զօրասիւնը Հ. Յ. Դաշնակցութեան սկզբունքներուն եւ հաւատաւոր արձագանգը անոր զաղափարներուն, իր զաղափարաբանական-քաղաքական վերլուծումներով, պիտի չըթերանայ արձանագրելու այն ինչ որ ժողովուրդէն կու գայ՝ ժողովուրդին համար: Ան պիտի ըլլայ զինուորը Սփիւռքի օրդաններու այն բանակին, որ կը միտի իրականացնել Հ. Յ. Դաշնակցութեան գերագոյն տեսլականը (իտէալը)՝ ԱԶԱՏ, ԱՆԿԱՍ ԵՒ ՄԻԱՅԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ-ի կերտում»:

ՀՈՒԲ (Թաւրիզ, Պարսկաստան, 1967 թ.) — Պարբերաթերթ Թաւրիզի Ազգային Դպրոցների: Կը հրատարակուի 1967 թուականին: Մեքենագիր-բաղմագրուած՝ 26-28 թերթ (21×26 սմ.): Աշակերտներէ բաղկացած խմբագրական կազմ. Գոհար Բարսեղեան, Զարիկ Մեքենեան, Նոր Յակոբեան եւ Վիդէն Ոսկեան: Հայերէն եւ պարսկերէն:

«Հուր»ի առաջին խմբագրականին մէջ կը գրուի:

««Հուր»ի ղլխաւոր եւ միակ նպատակն է Թաւրիզի հայոց ազգ. վարժարանների աշակերտութեան մէջ տարածել ու մշտապա պահել հրաւիրա զգացումներ դէպի հայ գիրն ու դրականութիւնը»:

ՀՈՒԲ (Թեհրան, Պարսկաստան, 1971 թ.) — Ամսագիր: Արտօնատէր եւ պատասխանատու տնօրէն՝ Գազիկ Յովակիմեան: Առաջին համարը լոյս կը տեսնէ 1971 թ. Յուլիսին: Կը դադրի 1974 թ. Օգոստոսին՝ 38 համար (յաճախ՝ միացեալ թիւ) լոյս տեսնելէ ետք: Հայերէն եւ պարսկերէն բովանդակութիւն: 62-136 էջ, նոյնքան մըն ալ պարսկերէն, որ առանձին էջաթիւ ունի (17×24 սմ.): Ամսագրի հայերէն բաժինին կ'աշխատակցին՝ Անտրէ Տէր Օհանեան (Ա. Ամուր-

եան), Արտակ Արքեպս. Մանուկեան, Գարեգին Եպս. Սարգիսեան, Էմիլ Յակոբեան, Արամ Գառնէ, Կոլիա Տ. Յովհաննիսեան, Արմէն Տօնոյեան, Լեւոն Գ. Մինասեան, Անդրանիկ Սարեան, Արա Յովհաննիսեան, Արմանտ, Աշոտ Մինասեան, եւն.: Պարսկերէն բաժինին կ'աշխատակցին իրանցի գրողներ: Այս բաժինին մէջ յօդուածներ եւ թարգմանութիւններ ունին՝ Հրանդ Ղուկասեան, Ա. Ամուրեան, Արա Յովհաննիսեան, Վարուժան Առաքելեան:

«Հուր» ամսագրի հրատարակութեան առիթով՝ Գաղիկ Յովակիմեան «Նախարան» խորագրուած խմբագրական խօսքին մէջ կը գրէ.

««ՀՈՒՐ» ամսագիրը, հեռու լինելով որեւէ քաղաքական հոսանքի պատկանելու հանգամանքից, լինելու է իրանահայութեան անկեղծ զգացումները արտայայտիչը, շօշափելով պատմական, հասարակական եւ գիտական ու գրական այնպիսի խնդիրներ, որոնք մեծ մասամբ առնչութիւն պիտի ունենան հայ եւ պարսիկ եղբայր ժողովուրդներու պատմական-մշակութային դարաւոր կապերին, աշխատելով գիտական ուսումնասիրութեամբ է՛լ աւելի ամրացնել պատմական խորք ունեցող այդ կապերը»:

ՁԱՅՆ (Միտնի, Աւստրալիա, 1976 թ.) — Պարբերաթերթ: Հրատարակութիւն Աւստրալա-Հայ Ընկերակցութեան: Առաջին համարը՝ 1976 թուականի Փետրուարին: Խմբագիր՝ Սարո Կարապետ, որուն կ'աջակցի Լեւոն Շէօճմէլեան:

ՁԱՅՆԸ-LA VOCE (Միլան, Իտալիա, 1975 թ.) - Քաղաքական, մշակութային ամսաթերթ: Առաջին համարը՝ 1975 թ.ի Յունուարին: Մեքենագիր-բաղմագրուած: Իտալերէն, ապա՝ կ'ունենայ հայերէնով բաժին մը: Մեքենագիր-բաղմագրուած: 9-15 էջ (22×33 սմ. եւ 21×30 սմ.): Սկիզբը՝ պարբերաթերթին անունը՝ «Ձայնը», ապա՝ «Ձայն»: Այժմ ունի խմբագրական կազմ մը՝ Ռիթա Յակոբեան, Արթօ Քէօշէյեան, Փաթրիցիա Ձեխին, Սուրէն Ծովիկեան:

ՂԵԻՈՆԴ ԵՐԷՅ (Շիքակօ, ԱՄՆ, 1970 թ.) - Ամսօրեայ հրատարակութիւն Ամենայն Սրբոց Եկեղեցւոյ: Հովիւ եւ խմբագիր՝ Սարգիս Քահանայ Անդրէասեան: Հրատարակութեան սկիզբ՝ 1970 թ.ի Յունուար: Հայերէն եւ անգլերէն: Լուսապատճէնային տպագրութիւն: 12-32 էջ (21·5×28 սմ., Գ. տարիէն՝ 18×25 սմ.):

«Խմբագրութեան Կողմէ» խորագրուած առաջին խմբագրականին մէջ՝ Սարգիս Աւագ Քահանայ Անդրէասեան կը գրէ.

««Ղեւոնդ երէց» անունով այս ամսաթերթը շարունակութիւնը պիտի ըլլայ Ամենայն Սրբոց Եկեղեցւոյ ՄԱՇՏՈՅ անուն նախկին երկամսեայ թերթին:

«...Մովորարար ծրագրած ենք զայն հրապարակ հանել ամիսը մէկ անգամ, որովհետեւ, հակառակ՝ ամէն շաբաթ լոյս ընծայելու մեր ցանկութեան, տեղական տպագրական դժուարութիւններ մեզ հարկադրեցին զայն ամսաթերթիկ դարձնել: Ան պիտի ըլլայ արձագանգը՝ Շիքակոյի հայ գաղութի կրօնական, ազգային, զեղարուեստական, միութենական տեղեկութեանց»:

**ՃԱՃԱՆՉ** (Լառնագա, Կիպրոս, 1979 թ.) – Աշակերտական պարբերաթերթ Նարեկ Ազգային Վարժարանի, Լառնագա: Լոյս կը տեսնէ 1979–1980 կրթական տարեշրջանէն: Առաջին տարին՝ երկու համար: Պատասխանատու ուսուցիչ՝ Մանուկ Սոմաքեան: Աշակերտներէ բաղկացած խմբագրական կազմ: Մեքենագիր–բազմագրուած: Առանց էջաթիւի, 28– թերթ (18·5×24 սմ.):

**ՃԱՌԱԳԱՅԹ** (Պէյրութ, Լիբանան, 1973 թ.) – Պարբերագիրք: Հրատարակութիւն Հայ Եկեղեցասիրաց Եղբայրակցութեան: Պատասխանատու՝ Արշակ Գալէնտէրեան: Լոյս կը տեսնէ միայն մէկ թիւ, 1973 թ.ին: 68 էջ (17×24·5 սմ.):

Պարբերաթերթին ուղղութիւնը կը բնորոշուի խմբագրականին հետեւեալ տողով.

«Ճառագայթ» ...իր ուղղութիւնն ու կենսադորձող աւելը կը ստանայ Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցիէն...»:

**ՄԱՄՈՒՐ** (Գահիրէ, Եգիպտոս, 1980 թ.) – Պարբերական հանդէս: Հրատարակիչ–խմբագիր՝ Եգիպտոսի առաջնորդական փոխանորդ Յովսէփ Ծ. Վրդ. Մամուր: Արտօնագիր չունենալուն՝ առաջին համարը կը հանդիսանայ նաեւ վերջինը:

**ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻ** (Հոլիվուտ, ԱՄՆ, 1979 թ.) – Ամսաթերթ: Հրատարակութիւն Հիւսիսային Ամերիկայի Հայաստանեայց Եկեղեցւոյ Արեւմտեան Առաջնորդարանի: Հրատարակութեան սկիզբ՝ 1979 թ.ի Յունուար: Անդլերէն եւ հայերէն բովանդակութիւն: 8 էջ (29×38 սմ.):

**ՄԱՇՏՈՅ** (Շիքակօ, ԱՄՆ, 1967 թ.) – Տեղեկատու Շիքակոյի Ամենայն Սրբոց Եկեղեցիի: 1967 թ.ին կը սկսի հրատարակութիւնը: Մեքենագիր–բազմագրուած: Հայերէն եւ անգլերէն բովանդակութիւն: Խմբագիր՝ Սահակ Քահանայ Վրթանէսեան:

**ՄԱՇՏՈՅ** (Ուաշինկթըն, ԱՄՆ, 1970) – Պարբերաթերթ Սուրբ Խաչ Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ: Լոյս կը տեսնէ 1970 թ.էն: Մեքենագիր–բազմագրուած: Հայերէն եւ անգլերէն բովանդակութիւն: 22–30 էջ (21·5×28 սմ.): Խմբագիր՝ Սահակ Քահանայ Վրթանէսեան:

ՄԱՇՏՈՅ (Լա Վերն, Գալիֆ, ԱՄՆ, 1977 թ.) – Ամսաթերթ: Հրատարակութիւն Ամերիկահայ Միջազգային Գոլէճի Աշակերտութեան եւ Տնօրէնութեան: Ուսանողներէ բաղկացած խմբագրական կազմ, որ յաճախակի փոփոխութիւններու կ'ենթարկուի: Առաջին համարը լոյս կը տեսնէ 1977 թ.ի Յունուարին: Թէեւ «ամսաթերթ» որակուած՝ «Մաշտոց» լոյս կը տեսնէ պարբերաբար, յաճախ միացեալ համարներով: Ա. տարին՝ 6 թիւ, Բ. տարին՝ 5 թիւ, Գ. տարին՝ 4 թիւ, Դ. տարին (1980 թ.)՝ 4 թիւ: 4–8 էջ (29×38 սմ.): Հայերէն եւ անգլերէն:

«Մեր Խօսքը» խորագրուած առաջին խմբագրականը կը յայտնէ.

«...Սոյն ամսաթերթով մեր կարելին պիտի ընենք, որպէսզի հայ եւ ամերիկացի բարեկամներու աւելի՛ մօտէն ծանօթացնենք Միացեալ Նահանգներու առաջին հայկական գոլէճին՝ Ամերիկահայ Միջազգային Գոլէճին բնոյթը եւ ծրագիրը, նպատակն ու կարեւորութիւնը»:

ՄԱՐԶԱՇՈՍԻԶ (Բարիզ, Ֆրանսա, 1968 թ.) – Մարզական, դեղորուեստական, դիտական պարբերաթերթ: Հրատարակութիւն Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան (Հ.Մ.Ը.Մ.) Ֆրանսայի Կեդրոնական Վարչութեան: Խմբագիր՝ Մերոն Ասատուրեան: Հրատարակութեան սկիզբ՝ 1968 թ.ի Հոկտեմբեր: Հայերէն եւ Ֆրանսերէն: 32 էջ (22×28 սմ.):

ՄԱՐԶԻԿ (Պէյրութ, Լիբանան, 1980 թ.) – Մարզական ամսաթերթ: Հրատարակութիւն Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան, Պէյրութ, Լիբանան: Առաջին համարը լոյս կը տեսնէ 1980 թ.ի Փետրուարին (թէեւ ամիսը յիշատակուած չէ): Գունատիպ կողք, 40 էջ (22×29 սմ.): Խմբագրի կամ խմբագիրներու անուն չի յիշատակուիր ամսագրին մէջ, սակայն անոր խմբագրական աշխատանքները կը կատարէ Յրթ. Գեղարդ (Գաղանճեան), Վարդգէս Տէր Կարապետեան եւ Վարուժան Մուրատեան եռեակը: Խմբագրականները ընդհանրապէս կը գրուին Երուանդ Տէմիրճեանի կողմէ: «Մարզիկ»ի բովանդակութիւնը կը կազմեն միութենական լուրեր, ազգային եւ միջազգային մարզական կեանք, տեսակցութիւններ եւ յուշագրութիւններ հայ մարզական շարժումին մասին:

«Առաջինը» խորագրուած իր առաջին խմբագրականին մէջ՝ «Մարզիկ» կը դրէ.

«Հ. Մ. Ը. Մ.ի մեծ ընտանիքը պէտք է ունենար հայելի մը, որուն մէջ նայէր երբեմն–երբեմն, կոկէր ինքզինք եւ ինչո՞ւ չէ, գոհանար:

«Այս հրատարակութիւնը պիտի ըլլայ այդ հայելի»:

«Տակաւին, այս հրատարակութիւնը միայն Հ. Մ. Ը. Մ. ի գործունէութեան արտայայտութիւնը պիտի չըլլայ: Հոս պիտի տեսնուին մարզական մեր բոլոր միութեանց հիմնական յաջողութիւնները, հոս պիտի տեսնուին հայրենի մարզիկները՝ իրենց դասիններով:

«Հոս պիտի արձանագրուի նաեւ միջազգային մարզական շարժումը...»

«Մարզանքն ու արուեստը ազգութիւն չեն ճանչնար, ազգային երանգին յաւելեալ հպարտանք տալով հանդերձ»:

ՄԱՐՄՆԱՄԱՐԶ (Մոնթրէալ, Գանատա, 1968 թ.) - Պարբերաթերթ: Հրատարակութիւն Հ. Մ. Ը. Մ. Կամք-ի, Մոնթրէալ, Գանատա: Խմբագրական կազմ. Պերճ Գարապաճեան, Յակոբ Մանուկեան, Գրիգոր Նիզիպլեան, Աշոտ Սերոբեան եւ Յակոբ Սեւակեան: «Ա. տարի, թիւ 1»-ի հրատարակութեան թուական նշուած է՝ «Ապրիլ-Մայիս, 1968»: Մեքենագիր-բազմագրուած, առանց էջաթիւի, 16 էջ (17.5 × 21.5 սմ.):

«Ինչո՞ւ Համար Այս Գործը» խմբագրականին մէջ՝ «Մարմնամարզ» կը գրէ.

«Կը նուիրենք «ՄԱՐՄՆԱՄԱՐԶ»ը հայրենիքէն հեռու, հայրենիքին համար ապրող ու անոր կարօտովը հրկիզող սփիւռքի մարզական սերունդին»:

ՄԵՆԵԱՆ (Պէյրութ, Լիբանան, 1969 թ.) - Պարբերաթերթ Պուրճ Համուտի Հ. Յ. Դ. Զաւարեան Աշակերտական Միութեան: Գրական, գաղափարաբանական եւ յուշագրական բովանդակութիւն: Լոյս կը տեսնէ մէկ թիւ, 1969 թ. Մարտին: 87 էջ (17 × 24 սմ.):

«Մեհեանի ծամբով...» խմբագրականին մէջ կ'ըսուի.

«Իրաւ դաշնակցականի կազմաւորման ճամբուն վրայ, հետաքրքրութիւն ու պատկառանք ստեղծելու համար նոր սերունդներուն մօտ, «Մեհեան»-ի առաջին այս թիւով փորձեցինք կամուրջ մը կապել՝ մեր ներկան անցեալին հետ յօդող...»:

ՄԵՆՔ (Նիւ Եորք, ԱՄՆ, 1975 թ.) - Պարբերաթերթ Հայ Մշակութային Միութեան (Նիւ Եորք): Առաջին տարուան թիւ 4էն՝ Պարբերաթերթ Համազգային Հայ Մշակութային Միութեան (Նիւ Եորք): Հրատարակութեան սկիզբը՝ 1975 թուականի Յունուար: Խմբագրական կազմ: Առաջին տարին պատասխանատու խմբագիր՝ Անայիս Պարսուճեան, երկրորդ տարին՝ Ժիրայր Աթթարեան: Դ. տարիէն սկսեալ խմբագրական կազմ՝ Ժիրայր Աթթարեան եւ Արիս Սեւակ (անդիւրէն բաժնի պատասխանատու): «Մեք»ը ունեցած է խմբագրական կազմի յաճախակի փոփոխութիւն: Նաեւ՝ հրատարակութեան անկանոնութիւն, ընդմիջում: Առաջին երեք տարիները (1975-1977)

կանոնաւորաբար լոյս տեսնելէ ետք (տարին՝ 4 թիւ), Դ. տարուան առաջին թիւը լոյս կը տեսնէ 1979 թ.ի Դեկտեմբերին: Գրական ստեղծագործական բաժինի կողքին՝ «Մենք» ունի զբաղատական եւ ուսումնասիրական բաժին: Նաեւ՝ անդլերէն յատուկ բաժին մը: Առաջին համարը եթէ կը բաղկանայ միայն 20 էջէ, յաջորդ համարները կ'արձանագրեն աճ, եւ կը հասնին մինչեւ 88 էջի (21.5×27.5 սմ.): Աշխատակիցներէն՝ Անայիս Պարսումեան, Ժիրայր Աթթարեան, Գարեգին Արքեպոս. Սարգիսեան, Լուսիկ, Ա. Արփինէ, Բիւզանդ Կոանեան, Վահէ Օշական, Արամ Հայկազ, Արմէն Տօնոյեան, Յակոբ Կարապենց, եւ ուրիշներ:

Իր նպատակին մասին՝ «Մենք» առաջին համարին մէջ կը յայտնէ.

«Կը փափաքինք այս էջերուն ընդմէջէն կարելի հարազատութեամբ մեր ընթերցողները հաղորդակից դարձնել Հայ Մշակութային Միութեան նպատակներուն:

«Կը փափաքինք մանաւանդ որ այս թերթը դառնայ միութեանս հաւատացող եւ առհասարակ մշակոյթով հետաքրքրուող հայ երիտասարդութեան հաւաքատեղին»:

ՄԵՐ ԺՈՂՈՎՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ (Բարիզ, Ֆրանսա, 1979 թ.) - Ամսական տեղեկատու Փարիզի Հայ Կաթողիկէ Ժողովրդապետութեան: Լոյս կը տեսնէ 1979 թուականի Մարտին: Խմբագիր եւ հրատարակիչ՝ Անթուան Վրդ. Թիւթիւնճեան: Հայերէն եւ Փրանսերէն բովանդակութիւն: 20-32 էջ (14.5×21 սմ.):

ՄԵՐ ՁԱՅՆԸ (Կլենտէյլ, Գալիֆ., ԱՄՆ, 1980 թ.) - Կլենտէյլի Ս. Աստուածածին Ազգ. Վարժարանի աշակերտական Պարբերաթերթ: Հրատարակութեան սկիզբ՝ 1980 թ.ի Հոկտեմբեր. «Ա. տարի, թիւ 2 - Դեկտ. 15, 1980»:

ՄԵՐ ՄՆԱՅՈՐԴԸ... (Պուէնոս Այրէս, Արժանթին, 1971 թ.) - Պարբերաթերթ: Հրատարակութիւն Հայ Աւետ. Եղբայրութեան Եկեղեցիին, Պուէնոս Այրէս: Առաջին համարը, 20 էջ, լոյս կը տեսնէ 1971 թ.ին (15.5×22 սմ.): Երկրորդը՝ 26 էջ՝ 1972 թ.ին, երրորդը՝ 32 էջ, 1974 թ.ին: Բովանդակութիւնը կը կազմեն Անատոլուի (Թուրքիա) խաւար անկիւններուն մէջ կատարուած աւետարանչական աշխատանքներու շուրջ դրուած նամակներ եւ տեղեկութիւններ: Իւրաքանչիւր համար ունի խմբագրական՝ «Ընթերցողին» խորագրուած եւ «Աւետարանչական Մարմին» ստորագրուած: Երրորդ համարին մէջ Վեր. Ս. Պաղպալեան ունի յօդուած եւ զերթուած: Ինչպէս նաեւ Վ. Թէքէեանի «Հաշուէյարդար»էն արտատպուած տողեր:

ՄԵՐ ՊԱՐԲԵՐԱԹԵՐԹԸ (Պէյրութ, Լիբանան, 1971 թ.) - Հրատարակութիւն Հայ Կաթողիկէ Ժողովրդապետութեան, Սբ. Եղիա-Սբ. Գրիգոր: Առաջին համարը լոյս կը տեսնէ Մարտ-Ապրիլ 1971 թուականով: Մինչեւ 1972 թ. լոյս կը տեսնէ 3 թիւ: Պատասխանատու՝ Անթուան Արիս: Առաջին թիւի իրագործում՝ Գրիգոր Մուրատեանի, երկրորդ եւ երրորդ թիւերու իրագործում՝ Հ. Անդրանիկ Վրդ.: Կոստեանի: Հայերէն, Փրանսերէն եւ արաբերէն բովանդակութիւն, յաջորդաբար 50, 52 եւ 54 էջ (22×28.5 սմ.): Դադարէ մը ետք, կը վերահրատարակուի 1977 թ.ին: Թիւ 4ը լոյս կը տեսնէ 1977 թ.ի Մայիսի 20ին, 64 էջ, իսկ միացեալ թիւ մը՝ թիւ 5-6, 1978 թ.ի Յունուարի 1ին, 74 էջ:

ՄԻՈՒԹԻՒՆ (Տիթրոյտ, Միչիկըն, ԱՄՆ, 1969 թ.) - Եռամսեայ հանդէս Պոլսահայ Մշակութային Միութեան՝ զրականութեան, արուեստի, միութենական տեղեկագրութեանց: 1977 թ.էն՝ վեցամսեայ հանդէս Պոլսահայ Մշակութային Միութեան՝ հայ մշակոյթի եւ միութենական տեղեկագրութեանց: Արտոնատէր՝ Պոլսահայ Մշակութային Միութեան վարչութիւն: Վարիչ-խմբագիր՝ Սեղա Տէմիրճեան: Հրատարակութեան սկիզբ՝ 1969 թ.ի Մարտ: Լուսապատճէնային տպագրութիւն: 12-24 էջ (21.5×26.5 սմ., ապա՝ 21.5×28 սմ.):

ՄԿՈՆ ՈՒ ՉԱԼՈՆ (Պէյրութ, Լիբանան, 1978 թ.) - [Մանկական պարբերաթերթ]: Հրատարակութիւն Համազգային Մշակութային եւ Կրթական Ընկերակցութեան: Հրատարակութեան սկիզբ՝ 1978 թ.: Մինչեւ 1980 թ. լոյս կը տեսնէ՝ 9 համար: Իւրաքանչիւրը՝ 24 էջ (22×29 սմ.): Գունաւոր եւ գեղատիպ հրատարակութիւն:

ՄՈՐԵՆԻ (Լիոն, Ֆրանսա, 1976 թ.) - Պարբերաթերթ Հայ Կաթողիկէ Ժողովրդապետութեան: Խմբագիր՝ Գէորգ Վրդ. Չապարեան: Հրատարակութեան սկիզբ՝ 1976 թ.ի Դեկտեմբերի 25: Եռամսեայ պարբերականութեամբ լոյս կը տեսնէ 10 համար, ապա՝ 1979 թ.ին կը միաձուլուի Հայ Կաթողիկէ Առաջնորդարանի պաշտօնական պարբերաթերթին՝ «Եկեղեցին Հայկական»ին: Մեքենագիր-բազմագրուած (21×30 սմ.):

ՄՐԳԱՍՏԱՆ (Ֆաուլըր, Գալիֆորնիա, ԱՄՆ, 1967 թ.) - Լրատու եկեղեցական գործունէութեան Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ, Ֆաուլըր: Առաջին համարը լոյս կը տեսնէ 1967 թ.ի Դեկտեմբերին. «Ք. Շրջան, Ա. տարի, թիւ 1. Դեկտ. 1967»<sup>9</sup>: Հովիւ եւ խմբագիր՝ Թաթուլ Քահանայ Երէցեան: Լուսապատճէնային հրա-

9. Նոյն եկեղեցին նոյն անունով պարբերաբերք մը լոյս ընծայած է 1952-1961 թուականներուն:

տարակութիւն: 16-26 էջ (21.5×27.5 սմ.): Հայերէն եւ անգլերէն:

ՅԱՂԹԱՆԱԿ (Մոնթրէալ, Գանատա, 1969 թ.) – Երկամսեայ հանդէս: Հրատարակութիւն Հայ Առաքելական Եկեղեցիի Երիտասարդական Կազմակերպութեան (Հ.Ա.Ե.Ե.Կ.): Մեքենագիր-բազմագրուած: 12-16 էջ (21×28 սմ.): Հայերէն եւ անգլերէն: Խմբագրական կազմ՝ Արա Կէրիքեան, Սնայիս Մանասեան (անգլերէն բաժինի խմբագիր), Հայկ Միսաքեան, Տիգրան Պալեան, Սարգիս Տողրամանեան:

ՅԱՂԹԱՆԱԿ (Բարիզ, Ֆրանսա, 1971 թ.) – Գաղաքական, գրական եւ հասարակական ամսաթերթ: Հրատարակութիւն Ֆրանսայի շրջանի Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան: Հրատարակութեան սկիզբ՝ 1971 թ.ի Յուլիս: Հայերէն եւ Ֆրանսերէն բովանդակութիւն: 8 էջ (28×38 սմ.): Հրատարակութեան տնօրէն՝ Կ. Տէր-Յովհաննէսեան: Խմբագիր՝ Պատրիկ Կէնճեան:

«Յաղթանակ», որուն ուղղութիւնը զինք հրատարակող կուսակցութեան ուղղութիւնն է, առաջին թիւի խմբագրականին մէջ կը գրէ.

«Մեր մտածումները երկու գլխաւոր բեւեռ ունին: Մի եւ անբաժան հայրենիք: Մի եւ անբաժան ժողովուրդ: Հայրենիքը՝ Խորհրդային Հայաստանն է: Ժողովուրդը՝ Արարատեան աշխարհի վրայ հաստատուած երկուք ու կէս միլիոն հայութիւնն է: Մեր բոլորին նուիրական պարտականութիւնն է անվերապահօրէն գուրդուրալ աւնոնց վրայ, աջակցիլ անոնց ստեղծադործական ճիգերուն, զմայլելի վերելքին»:

ՅԵՂԱՓՈՒՆՈՒԹԵԱՆ ՃԱՄԲՈՎ (Թեհրան, Պարսկաստան, 1979 թ.) – Հրատարակութիւն Հ. Յ. Դ. Ռոստոմ Երիտասարդական Միութեան: Առաջին թիւը՝ 1979 թ.ի Սեպտեմբերին: 16 էջ (20.5×27.5 սմ.): 16-40 էջ: Չափերը քանի մը անգամ փոփոխութիւն կրած են (21.5×28 սմ., ապա՝ 17×23.5 սմ.): Թէեւ բովանդակութիւնը մեծ մասով հայերէն, սակայն միշտ քանի մը էջ պարսկերէն:

ՆՇՈՅԼ (Սիրաքիւս, Նիւ Եորք, ԱՄՆ, 1974 թ.) – Հրատարակութիւն Սուրբ Պօղոս Հայց. Առաքելական Եկեղեցիի: «Հատոր Ա., թիւ 1»-ը լոյս կը տեսնէ 1974 թ.ի Յունիսին: Մեքենագիր-բազմագրուած: 29 էջ (14×21.5 սմ.): Հայերէն եւ անգլերէն: Խմբագիր՝ Ատուր Ատուրեան:

Առաջին թիւի խմբագրականին մէջ կ'ըսուի. «Մեր այս առաջին թիւը կը նկատենք շարունակութիւնը «Նշոյլ» թերթին, որուն նախաձեռնողն ու մղիչ ուժն էր... Փառէն Հայր Սուրբ Աւետիքեանը»:

Ուրեմն, կը հետեցուի, որ նախապէս դոյութիւն ունեցած է նոյն անունով թերթ մը, նոյն շրջապատին մէջ լոյս տեսած :

ՆՈՐ ԱՅԳ (Մոնթրէալ, Գանատա, 1978 թ.) – Տեղեկատու [ամսական] Հայկական Բարեգործական Ընդհ. Միութեան Մոնթրէալի մասնաճիւղին : Կը հրատարակուի 1978 թ.ի Յունուարէն ի վեր : Խմբագիր՝ Յարութիւն Էսէկիւլեան : 4-16 էջ (21.5×28 սմ.) :

«Նոր Այգ»ը՝ հրատարակութեան սկիզբը լոյս կը տեսնէ «Տեղեկատու» անունով :

ՆՈՐ ԱՆԻ (Սան Փաւլօ, Պրազիլ, 1980 թ.) – Պարբերագիրք՝ գրական, գեղարուեստական : Հրատարակութիւն Սան Փաւլոյի Հ. Բ. Ը. Միութեան Մշակութային Յանձնախումբի : Առաջին թիւը, գունատիպ կողքով, լոյս կը տեսնէ 1980 թ.ի Ապրիլին, նուիրուած Մեծ Եղեռնին : Առանց էջաթիւի, 36 էջ (19×27 սմ.) : Հայերէն եւ փորթուգալերէն :

«Նոր Անի»ի առաջնորդող «Մեր Խօսքը»ին մէջ կը պարզուի անոր հրատարակութեան գլխաւոր դրդապատճառը .

«Մեր ուժը սակայն, պիտի կեդրոնանայ մասնաւորապէս, նոր սերունդը քաջալերելու, դաստիարակելու եւ այդ ճամբով, Հայն ու Հայրենիքը ճանչցնելու սրբազան աշխատանքին վրայ» :

ՆՈՐ ԱՇԽԱՐՀ (Աթէնք, Յունաստան, 1968 թ.) – Ազգային շարթաթերթ, ապա՝ ազգային եկեղեցական շարթաթերթ : Ծարուսակութիւնը կը նկատուի Յունաստանի Ռամկավար Ազատական Կուսակցութեան օրկան՝ «Երկիր» շարթաթերթին, որ լոյս տեսած է՝ 1957-1968 թթ. : «Նոր Աշխարհ»ի առաջին թիւը լոյս կը տեսնէ 1968 թ.ի Նոյեմբերի 23-ին : Արտօնատէրը՝ մինչեւ 1973 թ.ի Մայիսի 12-ը, Արմենակ Գարանֆիլեան, ապա՝ մինչեւ այսօր, իրաւարան Ստեփան Ֆէսճեան : Մինչեւ 1977 թ. խմբագրապետի պաշտօնը կը վարէ Յակոբ Վարժապետեան, որուն կը յաջորդէ Զաւէն Գրիգորեան՝ այժմու խմբագիրը :

1979 թ.ի Դեկտեմբերի վերջերուն «Նոր Աշխարհ» ժամանակաորապէս կանգ կ'առնէ հետաքրքրական պատճառով մը . «Թերթը չհրատարակուեցաւ որովհետեւ գրաշար չունէինք, հասկնալի՛ յստակ պատճառ մը որ կը տառապեցնէ եւ հայ թերթերու հրատարակութիւնը, ամլութեան կը մատնէ ոչ թէ միայն մեր թերթը, այլ համայն արտասահմանի թերթերը»<sup>10</sup> :

1980 թ.ի Ապրիլի 1ին կը սկսի «Նոր Աշխարհ»ի «Նոր Ծրջան»ը, «ԺԲ. տարի, թիւ 18»ով : «Նոր Ծրջան»ի բազմաթիւ թիւեր ունին 2

10. Տես՝ «Նոր Աշխարհ», Նոր Ծրջան, քիւ 1 (Ապրիլ 1, 1980) :

էջէ բաղկացած յունարէն բաժին մը, հայ նորահաս սերունդին հաս-  
ցեազրուած: Ընդհանրապէս 4 էջ (35×60 սմ.): «Նոր Շրջան»ին թեր-  
թին սեփականութիւնը կը ստանձնէ Արարատ Մշակութային Մարզա-  
կան Միութիւնը:

«Նոր Շրջան»ի առաջին թիւի խմբագրականին մէջ կ'ըսուի.

«Ներկայ օրերու հայապահպանման աշխատանքին մէջ, հայ  
թերթին կարեւոր բաժին սահմանուած է եւ յաճախ հրամայական պա-  
հանջք է թերթի մը գոյութիւնը, անշուշտ բոլոր անոնց համար որոնք  
հետաքրքրուած են հայութեամբ եւ հայ ազգին գոյատեւման պա-  
րագայով»:

ՆՈՐ ԱՊՐԻԼ (Հայէպ, Սուրբա, 1980 թ.) – Պարբերազիրք.  
ազգային, մշակութային, դրական: Հրատարակութիւն Հ. Բ. Ը.  
Միութեան Սուրբոյ Շրջանակային Յանձնաժողովի: 88–118 էջ (17×24  
սմ.): Պատասխանատու խմբագիր՝ Բիւզանդ Մինասեան, խմբագիր-  
ներ՝ Լիւսի Սիւլահեան եւ Յակոբ Միքայէլեան: Աշխատակիցներ՝  
Հայկ Պարիկեան, Թորոս Թորանեան, Ս. Պալմանուկեան, Գ. Քեյեչ-  
եան, Յովհ. Զառիկեան, եւ այլք: Առաջին համարին տպագրութիւնը  
կ'աւարտի 1979 թ.ի Դեկտեմբերի 12ին, սակայն թերթի շարունակին  
վրայ դրուած է՝ «Ա. տարի, թիւ 1, 1980»:

«Պարբերական Մամուլի Կարեւորութիւնը» խորագրուած իր  
առաջին խմբագրականին մէջ՝ «Նոր Ապրիլ» կը յայտարարէ.

«Այսօր պարբերական մամուլով... հանդէս կու դայ Հ. Բ. Ը.  
Միութեան Սուրբոյ Շրջանակային Յանձնաժողովը: Անտարակոյս  
վարակիչ պիտի դառնայ այդ երեւոյթը: Ոչ մէկ արգելք կայ անոր:  
Մենք կը հաւատանք, որ պարբերական մամուլի բազմացումը ոչ թէ  
վնասակար է, ոյժերը կը ջլատէ, այլ կը ստեղծէ համապատասխան  
մթնոլորտ, շարժում, այլազանութիւն, հետեւաբար եւ խանդավա-  
ռութիւն: Ընթերցողներուն մօտ կ'առաջացնէ հետաքրքրութիւն, իսկ  
մտաւորականութեան համար կը դառնայ գործունէութեան դաշտ»:

ՆՈՐ ԱՐԴԱՐ (Կ. Պոլիս, Թուրքիա, 1970 թ.) – Քաղաքական,  
դրական, մշակութային շարաթաթերթ: Հիմնադիրներ՝ Կարօ Ալա-  
կէօզ, Պերճ Շիկահեր, Անթուան Կիւլիսթանեան (Ա. Վարդաստան),  
Զաւէն Մէնզիլճեան: Արտօնատէր եւ պատասխանատու տնօրէն՝ Ան-  
թուան Կիւլիսթանեան: Հրատարակութեան սկիզբ՝ 1970 թ.ի Ապրիլ:  
4 էջ (34×60 սմ.): Կը դադրի 1972 թ.ի վերջերուն:

ՆՈՐ ԱՐՇԱԻ (Հէմիլթըն, Գանատա, 1978 թ.) – Ամսական  
լրատու Հէմիլթընի Համազգային Մշակութային Միութեան. ազգա-  
յին, մշակութային, ընկերային: Առաջին համարը լոյս կը տեսնէ  
1978 թ.ի Յունուարին: Խմբագրական կազմ: Խմբագիր՝ Սարգիս

Պալեան: Լոսսապատճէնային տպագրութիւն: 8-10 էջ (21×28 սմ.):  
Հայերէն եւ անգլերէն:

«Մեր նպատակը» խորագրուած խմբագրականով՝ «Նոր Արշաւ»  
կը գրէ:

«Հէմիլթընի Համազգային Մշակութային Միութեան «Նոր  
Արշաւ» թերթը ի լոյս աշխարհ բերելու բուն նպատակն է այս քա-  
ղաքի հայ բնակչութեան մէջ — առանց գաղափարական եւ յարան-  
ուանական խտրութեան — սերտակցութիւն մը ստեղծել եւ ամէն  
ճիգ ի գործ դնել գաղութի բոլոր ազգային շարժումներուն եւ ազգա-  
յին եռուն կեանքի մը ի խնդիր կատարուած բոլոր ձեռնարկներուն  
արձագանքը հանդիսանալ եւ հայկական կեանքի զարգացման ու բար-  
գաւածման ստարբել»:

ՆՈՐ ԽՕՄԲ (Թեհրան, Պարսկաստան, 1979) — Շարաթաթերթ:  
Հրատարակութիւն Թեհրանի Հայ Մշակութային Կազմակերպութեան:  
Խմբագիր՝ Սուրէն Համբարձեան: Լոյս կը տեսնէ 1979 թ.ի Փետրուա-  
րէն: 8-12 էջ (25×35 սմ.):

«Նոր Խօսք»ը, ինչպէս պարսկահայ այլ թերթեր, կ'օգտուին  
Պարսկաստանի իրաւակարգի փոփոխութենէն, եւ հրատարակութեան  
արտօնութիւն ձեռք կը ձգեն:

ՆՈՐ ԾԻԼ (Դամասկոս, Սուրիա, 1979 թ.) — Պարբերաթերթ:  
Հրատարակութիւն Հ. Բ. Ը. Մ.ի Հայ Երիտասարդաց Ընկերակցու-  
թեան: Խմբագրական կազմ: Առաջին համարը լոյս կը տեսնէ 1979  
թ.ի Մարտի 1ին, երկրորդը՝ Յունիսի 1ին, երրորդը՝ Նոյեմբերի  
7ին, յաջորդաբար՝ 28, 36 եւ 40 էջ (21×32 սմ.): Մեքենագիր-բազ-  
մագրուած:

ՆՈՐ ԿԵԱՆՔ (Լոս Անճելըս, ԱՄՆ, 1978 թ.) — Շարաթաթերթ:  
Արտօնատէր-հրատարակիչ՝ Վահան Ճանսըզեան: Վարիչ-խմբագիր՝  
Հրանդ Սիմոնեան: Ընդհանուր տնօրէն՝ Արրահամ Չափարեան: Կա-  
նուխէն՝ թերթի խմբագրութիւնն ու վարչութիւնը կը կրեն փոփո-  
խութիւններ: Խմբագիր՝ Վահան Ճանսըզեան: Անգլերէն բաժնի խմբ-  
ագիր՝ Լեւոն Ֆերմանեան: Հրատարակութեան տնօրէն եւ խմբա-  
գիր՝ Սարգիս Մաճարեան: «Նոր Կեանք» կեանքի կը կոչուի 1978  
թ.ի Դեկտեմբերի 22ին: 28 էջ (29×38 սմ.): Յաջորդ համարներու  
էջաթիւը ընդհանրապէս կը տարուբերի 24-36ի միջեւ: Հայերէն եւ  
անգլերէն:

Առաջին համարին մէջ՝ «Նոր Կեանք»ի խմբագիրները կը յայ-  
տարարեն.

«...Հայ ենք: Հայ պիտի մնանք: Ահա բեմ մը եւս կ'աւելնայ՝  
պաշտպանելու համար հայ զիրը, հայ դատը, հայ իրականութիւնը»:

**ՆՈՐ ՈՒՂԻ** (Պէյրութ, Լիբանան, 1969 թ.) – Ի խնդիր ազգային դեմոկրատիայի: Առաջին համարին վրայ՝ «1969 Յուլիս, թիւ 1»: Մեքենագիր-բազմադրուած: 19 էջ (21×27 սմ.): Լոյս կը տեսնէ միայն մէկ թիւ: «Նոր Ուղի»ն ունի ո՛չ հասցէ, ո՛չ խմբագրի կամ հրատարակիչի անուն: Խմբագիրն է սակայն՝ Գասպար Տէրտէրեան: «Ինչո՞ւ կը հրատարակենք «Նոր Ուղի»ն» առաջնորդող յօդուածը կ'ըսէ:

«Լիբանանահայ բազուկի եւ միտքի բոլոր աշխատաւորները երկար տարիներ զրկուած մնալէ վերջ, ահա կ'ունենան իրենց հարազատ քաղաքական հրատարակութիւնը՝ «ՆՈՐ ՈՒՂԻ»ն»:

**ՆՈՐ ՁՈՒՂԱ** (Նոր Ձուզա, Պարսկաստան, 1977 թ.) – Տեղեկատու թերթիկ: Հրատարակութիւն Իրանա-Հնդկաստանի Թեմի Աղգային Առաջնորդարանի, Նոր Ձուզա, Ս. Ամենափրկիչ Վանք: Սկիզբը լոյս կը տեսնէ իւրաքանչիւր ամսուան 1ին եւ 16ին: Առաջին համարը՝ 1977 թ.ի Յունուարի 1ին: Մեքենագիր-բազմադրուած: 6-8 էջ (21×33 սմ.): Բ. տարուան 10րդ համարէն սկսեալ թերթին չափը կը փոխուի՝ 12-58 էջ (21.5×28 սմ.): Խմբագիրներ՝ Մեսրոպ Ծ. Վրդ. Աշճեան (այժմ՝ Եպիսկոպոս) եւ Լեւոն Գ. Մինասեան: 1978 Ապրիլէն սկսեալ՝ նորընտիր առաջնորդ Կորիւն Վրդ. Պապեան (այժմ՝ Եպիսկոպոս):

**ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ** (Սիտնի, Աւստրալիա, 1979 թ.) – Պարբերաթերթ: Հրատարակութիւն Հայ Համալսարանական Ուսանողներու Միութեան: Առաջին համարը լոյս կը տեսնէ 1979 թ.ի Յունիսին:

**ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ** (Լոս Անճելըս, ԱՄՆ, 1975 թ.) – Ամսաթերթ՝ ազգային, գրական: Հրատարակութեան սկիզբ՝ 1975 թ.ի Ապրիլ: Խմբագիր՝ Ս. Նայիրի: Թերթի խմբագրական կազմը եւ աշխատակիցներու մեծ մասը Հայաստան ծնած, ու հոն հասակ առած, սակայն վերջին քառասնամեակին Միացեալ Նահանգներ հաստատուած (յատկապէս ԱՆՁԱ-յի եւ անոր նախագահին՝ Ճորճ Մարտիկեանի ջանքերով), անձանօթ տարեց մտաւորականներ են. Ս. Նայիրի, Վ. Շահունի, Գ. Սահարունի, Յ. Ուրարտացի, Գեղամ-Գեղակ, Էւն.: Վերջին շրջանին, յատկապէս Լեւոն Երկաթի խմբագրութեան մաս կազմելէն ի վեր, «Նոր Սերունդ» ջատագով կը հանդիսանայ «Գաղանի Բանակ»ին: Թէեւ ամսագիր, թերթը լոյս կը տեսնէ լրագրի ծաւալով, 8 էջ (38×58 սմ.): Լեզուն ընդհանրապէս արեւելահայերէն:

Թերթի ուղղութեան մասին որոշ գաղափար կու տան առաջին թիւէն քաղուած հետեւեալ տողերը.

«Այսօր Արեւելեան կիսագնդի վրայ՝ հայ ժողովրդի մեծագոյն

ողբերգութեան 60-ամեայ տարելիցի զուգարդիպութեամբ, լուրջ մտահոգութիւններով ու պարտականութիւններով, սփիւռքահայ կեանքին է լծուած «Նոր Սերունդ» ամսաթերթը:

«Մօտ ապագան կամ իրարայայջորդ ամիսները կը դրսեւորեն որդեգրուած նպատակներն ու ձգտումները:

«Ամէն պարագայում, նա հայ սփիւռքի հարազատ նոր զաւակն է ու նրա նուիրեալ սպասարկուն»:

ՆՈՐ ՍԻՈՆ (Երուսաղէմ, Պաղեստին, 1972 թ.) – Պարբերաթերթ Երուսաղէմի Հայ Պատրիարքութեան (Սրբոց Յակոբեանց) Ժառանգաւորաց Վարժարանի եւ Ընծայարանի: Առաջին համարը՝ Ա. տարի, թիւ 1, անթուակիր, սակայն լոյս տեսած 1972 թ.ին: 48 էջ (19×28 սմ.):

ՇԱՂԿԱՊ (Բարիզ, Ֆրանսա, 1980 թ.) – Պարբերաթերթ Ֆրանսայի կոմկուսին: Լոյս կը տեսնէ երկու լեզուներով՝ ֆրանսերէն եւ հայերէն: Նոր չրջանը կը սկսի 1980 թ.ի դարձան: 4 էջ (30×40 սմ.):

ՇԱՆԹ (Մոնթրէալ, Գանատա, 1969 թ.) – Գեղարուեստական, գրական, մշակութային պարբերաթերթ: Հրատարակութիւն Հայ Երիտասարդաց Դաշնակցութեան «Լեւոն Շանթ» Խումբի, ապա՝ Ուխտի: Առաջին համարին վրայ՝ «Ա. տարի, թիւ 1, Յունուար-Փետրուար 1969»: Մեքենագիր-բաղմագրուած: 24-32 էջ (21·5·×28 սմ.): Խրմբագիր՝ Զօհրապ Մելիքեան: Հրատարակութեան առաջին տարին լոյս կը տեսնէ 4 թիւ: Կը հրատարակուի մինչեւ 1972 թ.:

Առաջին համարին մէջ՝ «Շանթ» կը յայտարարէ.

«Այսօր, քսաներորդ դարու երկրորդ կիսուն, հայրենիքէն հեռու բայց հայրենիքին հետ, օտար հորիզոններու տակ հասակ առած, Հայ Երիտասարդաց Դաշնակցութեան «Լեւոն Շանթ» ուխտը սկսած է սրբազան գործի մը...:

«Նոր հանգրուան մը ըլլալը չէ մեր նպատակը հայու հազարամեայ պատմութեան էջերուն մէջ, այլ, նո՛ր թափ եւ զարկ տալ դաստիարակութեան մը որուն կարիքը անսահման է մեր մէջ»:

ՇԻՐԱԶ (Սիտնի, Աւստրալիա, 1979 թ.) – Պարբերաթերթ: Հրատարակութիւն Աւստրալիոյ Հայ Ուսանողական Ընկերակցութեան: Լոյս կը տեսնէ 1979 թ.ի սկիզբէն:

ՇՈՂ (Պուրճ-Համուտ, Լիբանան, 1980 թ.) – Հրատարակութիւն Պուրճ Համուտի Նորաչէն (Թիրօ) Թաղի Հայ Եկեղեցասէր Հորդեւոր Միութեան: Առաջին համարի թուականը՝ 1980 թ.ի Դեկտեմբերի 20: 15 թերթ (21×33 սմ.): Մեքենագիր-բաղմագրուած:

«Մեր նպատակը» խորագրուած խմբագրականը կ'ըսէ.

«Մեր նպատակն է հայ մարդուն վերածանօթացնել մոռցուած Աստուած մը, Մեր ՀԱՅՐԵՐՈՒ ԱՍՏՈՒԱԾԸ...»:

ՇՈՂԵՐ (Պէյրութ, Լիբանան, 1980 թ.) - Պարբերաթերթ Հայ Աւետարանական Փիթըր եւ էլիզապէթ Թորոսեան Միջնակարգ Վարժարանի: «Ա. տարի, թիւ 1» (Յունիս, 1980): Խմբագիր՝ Մկօ Մելքոնեան: Ուսուցիչներու եւ աշակերտներու գրութիւններ: Մեքենագիր-բաղմագրուած: 28 էջ (22×28 սմ.):

ՈՒՂԻ (Գահիրէ, Եգիպտոս, 1972 թ.) - Կիսամեայ հանդէս Գալուստեան Ազգ. Վարժարանի աշակերտութեան: Առաջին համարը կը հրատարակուի 1972 թ.ի Ապրիլին: Լուսապատճէնային տպագրութիւն: 20 էջ (16.5×23 սմ.): Նոյն տարին, նոյն ծաւալով լոյս կը տեսնէ երկրորդ համար մը: 1973 թուականին՝ մէկ համար, 112 էջ: Վերջին համար մըն ալ՝ 1974 թ.ին: Խմբագիր՝ Տիգրան Գէորգեան:

ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ (Թեհրան, Պարսկաստան, 1970 թ.) - Պարբերաթերթ: Հրատարակութիւն Հ.Յ.Դ. Ուսանողական Միութեան: Առաջին պրակը լոյս կը տեսնէ 1970 թ.ի վերջերուն: «Պրակ թիւ 2»ը՝ 1971 թ.ի Մարտին, իսկ «Պրակ թիւ 3»ը՝ 1971 թ.ի Օգոստոսին: 15-18 թերթ (20×26.5 սմ.): Մեքենագիր-բաղմագրուած:

ՈՒՐԱՐՏՈՒ (Նիւ Եորք, ԱՄՆ, 1974 թ.) - Ազգային, գրական, զեղարուեստական, հասարակական եւ երգիծական շաբաթաթերթ: Հակառակ «շաբաթաթերթ» կոչումին, թերթին խմբագրութիւնը կը յայտնէ, թէ «Ուրարտու» առ այժմ լոյս պիտի տեսնէ ամիսը երկու անգամ եւ երեք ամիս յետոյ... Իրբեւ շաբաթաթերթ»: Սակայն եւ այնպէս, թերթը կը շարունակէ լոյս տեսնել ամիսը երկու անգամ: Առաջին համարը լոյս կը տեսնէ 1974 թ.ի Մայիսի 1-ին: Ա. տարին լոյս կը տեսնէ 26 թիւ, 8-12 էջ (28.5×42 սմ.): Հրատարակիչ-խմբագիր՝ Յակոբ Նազարեան (Թանգեան), որ առաջին համարին մէջ, «Սօսք Ընթերցողին Հետ» գրութեամբ կը յայտնէ, թէ «Ուրարտու»ի խմբագրատեղիները պիտի վարէ «Նոր Աշխարհ» շաբաթաթերթի երկարամեայ խմբագիր՝ Սամուէլ Յ. Թումայեան: Բ. տարուան առաջին համարը (1975 թ.ի Յունիսի 7) լոյս կը տեսնէ նոյն հրատարակչականին կողմէ հրատարակուած «The Armenian Times»ի Ա. տարուան առաջին համարին կցուած կամ միացած: Կարճ ժամանակ մը՝ մինչեւ Դեկտեմբեր, միասին լոյս տեսնելէ ետք, կը դադրին երկուքն ալ:

«Ուրարտու»ի ուղղութեան մասին առաջին համարը կու տայ կարգ մը լուսաբանութիւններ:

«Ուրարտու» պիտի ըլլայ համա-ժողովրդական հրատարակու-

թիւն մը, զերծ նախապաշարումներէ եւ կողմնակցական հակումներէ : Իր էջերը բաց պիտի ըլլան բոլորին առջեւ, պայմանաւ, որ թերթին աշխատակիցները հեռու մնան խժրժանք եւ ատելութիւն ու քէն ենթադրող հակումներէ : Անշուշտ, «Ուրարտու» պիտի ունենայ իր մասնաշաղկապ ուղղութիւնն ու սկզբունքային մտահոգութիւնները եւ իր էջերուն մէջ պիտի գնահատուին գնահատութեան արժանի շարժումները եւ պիտի քննադատուին՝ քննադատութեան արժանի երեւոյթները» :

ՊԱՅՔԱՐ (Ալմելօ, Հոլանտա, 1979 թ.) – Ամսաթերթ : Հրատարակութեանց տնօրէն՝ Նուպար Չաքմաքճեան : Խմբագիր՝ Նուպար Եալմեան : Առաջին համարը՝ 1979 թ.ի Մարտին : 12 էջ (21×30 սմ.) : Հայերէն եւ հոլանտերէն : 12–15 էջ :

«Պայքար»ի առաջին խմբագրականին մէջ կ'ըսուի .

«Ահաւասիկ մեր լեզուով եւ հաճոյքով կը ներկայացնենք ձեզի «Պայքար»ի առաջին թիւը :

«...Մեր նպատակն է ասկէ յետոյ ձեզի տեղեակ պահել բոլոր այն իրադարձութիւններէն, որոնք տեղի կ'ունենան Գաղթականաց Յանձնախումբի մէջ, ինչպէս նաեւ Հայրենիքի եւ Սփիւռքահայութեան հայրենանուէր դործունէութեան վերաբերեալ լուրեր» :

ՊԱՐԲԵՐԱԳԻՐԲ (Պէյրութ, 1969–1970 թթ.) – Հրատարակութիւն Հայ Աւետ. Վարժարաններու Ուսուցչական Միութեան, Պէյրութ : Թէեւ 1969–1970 թուակիր, «Պարբերագիրք»ին տպագրութիւնը աւարտած է 1971 թուականին : Խմբագիր՝ Բարկէն Չանոյեան : 124 էջ (21×27 սմ.) :

ՊԱՐԲԵՐԱԹԵՐԹ (Վիեննա, Աւստրիա, 1975 թ.) – Հրատարակութիւն Հայ Ուսանողական եւ Երիտասարդական Միութեան : Տիտղոսաթերթին վրայ՝ 1975 թ., իսկ վերջին էջին վրայ, ձեռագրով՝ «այս թերթին տպագրութիւնը վերջացաւ 10 Հոկտ. 1975 թուին» : Առաջին համարին խմբագրականը՝ «Սփիւռքահայութիւն եւ Ընկերային Յարաբերութիւն» խորագրուած, կը կրէ ստորագրութիւնը Արամ Յ. Պալեանի : 36 էջ (21×29.5 սմ.) :

ՊԱՐԲԵՐԱԹԵՐԹ (Հալէպ, Սուրիա, 1978 թ.) – Պարբերաթերթ : Հրատարակութիւն Հ. Բ. Ը. Միութեան Հայ Երիտասարդաց Ընկերակցութեան Ուսանողական Բաժնի : Հրատարակութեան սկիզբը՝ 1978 թ.ի Յունուարի 1 : Խմբագրական կազմ՝ Հրայր Մուրատեան, Յարութիւն Պալեան, Մարալ Պետեան, Վազգէն Պերդուտեան, Ռուպերթ Սիւլահեան, Յակոբ Փիլաւճեան : Հրատարակութեան երկրորդ տարին՝ 1979 թ.ի Յունուարին, 5–րդ համարով, խմբագրական կազ-

մի փոփոխութիւններ կ'արձանագրուին. Անի Տիմիճեան, Արփի Ատուրեան, Մարալ Պետեան, Յարութիւն Պալեան, Ռոպերթ Սիւլահեան, Վազգէն Պերզուտեան: Գ. տարին՝ նոր փոփոխութիւն խմբագրական կազմին մէջ: Գ. տարուան վերջին համարէն (թիւ 12) սկսեալ՝ պատասխանատու խմբագիր՝ Ռոպերթ Սիւլահեան: Մեքենագործագրամագրուած: 18-85 թերթ (21×33 սմ.): 1979 թ.ի Յունուարին, Գ. տարուան առաջին համարով (թիւ 9) «Պարբերաթերթ»ը կը մկրտուի նոր անունով՝ «Էրեբունի»:

«Ինչո՞ւ Այս Թերթը» խորագրուած առաջին խմբագրականին մէջ՝ «Պարբերաթերթ» կու տայ հետեւեալ բացատրութիւնը.

«Հ. Բ. Ը. Մ.ի Հայ Երիտասարդաց Ընկերակցութեան Ուսանողական Բաժինը հրատարակելով այս պարբերաթերթը, կ'ուզէ հարազատ արտայայտիչն ըլլալ մեր միութեան շինիչ, բազմակողմանի դործերուն, նպատակներուն ու տեսլականին: Ինչպէս նաեւ կ'ուզէ կապ մը ստեղծել Հ. Ե. Ը.ի ընտանիքի երէց, միջին եւ կրտսեր անդամներուն եւ դործող մարմիններուն միջեւ...»:

ՊԱՐԲԵՐԱԹԵՐԹ (Հալէպ, Սուրիա, 1978 թ.) – Հրատարակութիւն Հայոց Բերիոյ Թեմի Առաջնորդարանին: Առաջին համարը լոյս կը տեսնէ 1978 թ.ի Դեկտեմբերին (կողքին վրայ տպուած է՝ «Ա. տարի, թիւ 1, Հոկտ-Դեկտ. 1978»): Միայն 6-րդ համարին մէջ զետեղուած է խմբագրական կազմը. Արարատ Վրդ. Թօսունեան եւ Զաւէն Սապունճեան. գեղարուեստական պատասխանատու՝ Արմիկ Նայպանտեան: 64-154 էջ (16·5×24 սմ.): Մինչեւ 1980 թ.ի Դեկտեմբեր լոյս կը տեսնէ 9 համար: Աշխատակիցներ՝ Սուրէն Եպս. Գաթարոյեան, Թորոս Թորանեան, Հայկ Պարիկեան, Լիւսի Սիւլահեան, Էօժէնի Դանիէլեան, Յակոբ Պէքեարեան, Կորին Շահինեան, Պարզև Միտիբեան, Գէորգ Թեմիզեան, եւ այլք:

«Առաջին Թիւի Առիթով» «Պարբերաթերթ»ի խմբագրութիւնը կը յայտնէ.

«Պարբերաթերթի հրատարակութեան ձեռնամուխ եղանք նաեւ հաւատարմով, որ ան շատոնց զգացուող անհրաժեշտութիւն մըն է մեզի համար: Հայոց Բերիոյ Թեմին եկեղեցիներու, կրթական ու մշակութային հաստատութիւններու եւ միութիւններու դործունէութիւնները մէկտեղող պատկերը պիտի ըլլայ ան, պիտի արտաբերէ մեր անհատական ու հանրային կարելիութիւնները եւ դաստիարակիչ դեր մըն ալ ունենայ: Հայ համայնքի աշխուժութեամբ պայմանաւորուած է յաջողութիւնը այս թերթի էջերուն, որոնք անկասկած, փոխադարձ նպատտ մըն ալ պիտի ունենան մեր կեանքին» (թիւ 1, էջ 64):

ՊԱՐԲԵՐԱԹԵՐԹ – Ոչ հասցէ, ոչ թուական, ոչ հրատարա-

կուլթեան վայր եւ ոչ ալ խմբազիր կամ հրատարակիչ կը յիշատակուին: Բովանդակութեանն դատելով՝ «Պարբերաթերթ»ը հաւանաբար լոյս կը տեսնէ Հայէսլի մէջ, (Սուբիա) 1979 թ.էն սկսած, Քրիստոփոր Ուսանողական Միութեան նախաձեռնութեամբ: Մեքենագիր-բաղմագրուած: 7-21 թերթ (21×33 սմ.):

ՁԱՀ (Լոս Անճելըս, ԱՄՆ, 1970 թ.) — Պարբերաթերթ Մեսրոպեան Նախակրթարան եւ Երկրորդական Վարժարանի: Լոյս կը տեսնէ 1970-71 կրթական տարեշրջանէն: Առաջին թիւը՝ անթուակիր, կը բաղկանայ փոքրազիր 28 էջէ (14×21.5 սմ.): Հայերէն եւ անգլերէն: Աշակերտական փորձեր: Առաջին համարի խմբագիր՝ Թէտ Իսկէնտէրեան:

ՍԱՐՏԱՐԱՊԱՍ (Լոնտոն, Անգլիա, 1971 թ.) — Ամսաթերթ: Հրատարակութիւն Լոնտոնի Հայ Երիտասարդաց Միութեան: Խմբագրական կազմ՝ Պատասխանատու խմբագիր՝ Հայկ Մսրըլեան: Անգլերէն եւ հայերէն բովանդակութիւն: Առաջին համարը լոյս կը տեսնէ 1971 թ.ի Յունիսին: Մեքենագիր-բաղմագրուած: 36-48 էջ (10.5×29 սմ.): Վերջին համարը՝ միացեալ համար մը՝ Մարտ-Մայիս 1972 թուակիր (թիւ 9-11), տպագիր է, եւ բաղկացած՝ 40 էջէ (9.5×25 սմ.):

Հինգ հազար հաշուող հայ զաղուծին միակ թերթը կը հանդիսանայ «Մարտարապատ», որ առաջին համարի խմբագրականով կ'առաջադրէ:

«Հայ մ'անք, հայրենիքի իրականութեամբ, հզօրութեամբ, սէրով եւ յոյսով ապրինք. սակայն եւ ապրինք անցնելով խօսքէ ԳՈՐԾԻ»:

ՍԱՐՏԱՐԱՊԱՍ (Պուէնոս Այրէս, Արժանթին, 1975 թ.) — Ազգային, հասարակական, մշակութային պարբերաթերթ: Օրկանն է Արժանթինի Ռամկավար Ազատական Կուսակցութեան: Արտօնատէր եւ տնօրէն՝ Նահապետ Նահապետեան: «Մարտարապատ» կը սկսի հրատարակուիլ 1975 թ.ի Սեպտեմբերի 6-ին: Լոյս կը տեսնէ երկու շաբաթը անգամ մը: Տիրապետողը՝ սպաներէնն է, 8 էջի վրայ 6 էջ: Հայերէնը՝ 2 էջ: 8-16 էջ (27.5×36.5, ապա՝ 29×40.5 սմ.):

Առաջին թիւի հրատարակութեան առիթով՝ «Մարտարապատ» կը գրէ:

«Միւրեցինք մեր այս համեստ ճիգը պսակել ներշնչումի տեւական աղբիւր եղող պատմականացած անունով մը, «Մարտարապատ», համադրութիւնը հերոսական ճիգի մը, որով մեր ժողովուրդը անվերապահ եւ ամբողջականօրէն յառաջխաղաց անվկանդ ողիով մը պաշտպանելու փշրացած իր Հայրենիքին բեկորները, անով վերակերտելու իր ամբողջականութիւնը»:

ՄԻՓԱՆ (Նիւ Ճըրզի, ԱՄՆ, 1977 թ.) — Պարբերաթերթ Ամերիկայի Հայ Աւետարանական Գոլէճի Ուսանողական Միութեան<sup>11</sup>: Առաջին համարը լոյս կը տեսնէ 1977 թ.ի Մարտի 26-ին: Նոյն տարուան Սեպտեմբերի 10-ին՝ երկրորդ համարը: Առաջին երկու թիւերն ալ մեքենագիր-բաղմագրուած: 1978 (Բ. տարի) եւ 1980 (Գ. եւ Դ. տարի, միացեալ) թուականներուն՝ մէկական թիւ, տպագիր, 4-8 էջ (21×28 սմ.): Խմբագրական կազմ՝ Վահէ Արէլեան, Յակոբ Գասպարեան, Պերճուհի Պարսումեան: Երկրորդ համարէն սկսեալ՝ միայն Վահէ Արէլեան եւ Պերճուհի Պարսումեան:

ՍԼԱՅՔ (Լոս Անճելըս, ԱՄՆ, 1979 թ.) — Պարբերագիրք Սրբոց Նահատակաց Ազգային Նախակրթարանի: Առաջին համարը՝ 1979 թ.ի Դեկտեմբերին: Աշակերտական ձեռնարկ: Հայերէն եւ անգլերէն: Հայերէն բաժնի խմբագրութեան վարիչ՝ Էօթէնի Պետրոսեան: 20 էջ (21·5×27 սմ.):

ՍՈՒՐ ՀԱՆԴԱԿ (Թեհրան, Պարսկաստան, 1980 թ.) — Ամսաթերթ: Հրատարակութիւն Թեհրանի Հայ Աւետ. «Ս. Յովհաննէս» եկեղեցիի: Հրատարակութեան սկիզբ՝ 1980 թ.ի Յունուար: Ազգային-հոգեւոր բովանդակութիւն: Մեքենագիր-բաղմագրուած: 16-22 էջ (21×33 սմ.):

ՎԵՐԵԼՔ (Պէյրութ, Լիբանան, 1970 թ.) — Կրօնական տարեգիրք, Հայ Բրիտանիայի Ընտանիքին Տարեգիրքը, Հայ Ընտանիքին Տարեգիրքը. այս երեք ենթախորագիրներն ալ օգտագործուած են լոյս տեսած հատորներուն տիրոջութեան տարեգիրքին վրայ: Հրատարակութիւն՝ Միթթարեան Վարժարանի (Վիեննական): Խմբագիր՝ Բարսեղ Վրդ. Ֆէրհաթեան: Հրատարակութեան սկիզբ՝ 1970 թ.: 120-215 էջ (17×24 սմ.): Առաջին հատորին մէջ կ'ըսուի. «Վերելք տարեգիրք մըն է, որ տարին երկիցս լոյս պիտի տեսնէ. Յունուարին-Յունիսին»: Խոստումը կը յարգուի 1970 եւ 1971 տարիներուն: 1972 եւ 1973 տարիներուն, փոխան երկուքի, տարին հատոր մը միայն: Խմբագրին Լիբանանէն մեկնումով՝ «Վերելք» տարեգիրքը կը զազրի, 6 հատոր լոյս տեսնելէ ետք<sup>12</sup>:

11. Հաւանական շփոթի մը առաջը առնելու մտահոգութեամբ հարկ է նշել, որ վերոյիշեալ Ուսանողական Միութիւնը կազմուած է Պէյրութի Հայ Աւետ. Գոլէճի շրջանաւարտ կամ քերաւարտ ուսանողներէ:

12. Այս «Վերելք»ը չշփոթել նոյն հաստատութեան ուսանողական պարբերագիրքին հետ, որ կը կրէ նոյն անունը եւ լոյս կը տեսնէ ամբատաբար, սկսած 1961 թ.ի Մայիսէն: Այս վերջինս, 1968 թ.էն սկսեալ լոյս կը տեսնէ որպէս ուսանողական տարեգիրք: 1981 թ.ին, Բարսեղ Վրդ. Ֆերահեան, Լոս Անճելըսի մէջ լոյս կ'ըն-

Իր առաքելութեան մասին՝ «Վերելք» տարեգիրք՝ առաջին հատորին մէջ կը յայտարարէ .

«Թերթ-առտիօ-հեռատեսիլ. գիրք-այցելութիւն, մեր Հայ քր-րիստոնեայ ընտանիքներու մէջ կը քանդեն շատ բան — հաւատալիքը եւ մաքուր սպրում: Վերելքը պիտի ջանայ քանդուածը շտկել եւ բան մըն ալ վրան աւելցնել:

«Պիտի բովանդակէ կրօնական, ընտանեկան, բարոյական յօդուածներ, շինիչ պատմուածքներ, մատչելի բոլորին. իւրաքանչիւր յօդուած՝ շերտ մը արեւահամ հաց, հոգիին սնունդ տուող»:

ՏԱԹԵԻ (Պէյրուս, Լիբանան, 1973 թ.) — Տարեգիրք Կենաց Երկրորդական Վարժարանի: Պատասխանատու խմբագիր՝ Օհան Պոտրումեան: Օգնական խմբագիր՝ Ալիս Գաղանճեան: 44 էջ (24×34.5 սմ.)<sup>13</sup>:

ՏԱՐԵԳԻՐԲ ԼՈՅՍԻ Վարժարանի (Տես՝ ԱԲՆԵԶԵՐ):

ՏԱՐԵԳԻՐԲ (Պէյրուս, Լիբանան, 1972 թ.) — Հրատարակութիւն Հայ Աւետ. Կէրթմէնեան Վարժարանի: Հրատարակութեան թրւական՝ 1972 (1971-72 կրթական տարեշրջանի համար): Առանց էջաթիւի՝ 40 էջ (20×27.5 սմ.):

ՏԱՐԵԳԻՐԲ (Հոլիվուտ, Գալիֆ., ԱՄՆ, 1973 թ.) — Ռոզ եւ Ալէք Փելիպոս Ազգային Վարժարանի: 1973 թ.էն սկսեալ: 1976-77 կրթական տարեշրջանի պատկերազարդ տարեգիրքը կը բաղկանայ 56 էջէ (28×21 սմ.):

ՏԱՐԵԳԻՐԲ (Լոնտոն, Անգլիա, 1980 թ.) — Գէորգ Թահթաճեան Կիրակնօրեայ Վարժարանի: Հրատարակութիւն՝ Լոնտոնահայ Մշակութային Միութեան: Խմբագիր՝ Յակոբ Ս. Մանուկեան: Հրատարակութեան թուական՝ 1980 թ.ի Մայիս: Առանց էջաթիւի՝ 36 էջ (20×26 սմ.):

ՏԱՐԵԳԻՐԲ (Լա-Վըրն, Գալիֆ., ԱՄՆ, 1977 թ.) — Հրատարակութիւն Ամերիկահայ Միջազգային Գոլէճի: Հայերէն եւ անգլերէն: Հրատարակութիւնը կը սկսի 1977 թ.ին, տարին՝ հատոր մը: 60-80 էջ (28×21.5 սմ.):

Ժայէ «Վերելք» ամսնով տարեգիրք մը՝ քիւ 7, գայն համարելով շարունակութիւնը իր՝ Պէյրուսի մէջ հրատարակած «Վերելք»ին:

13. Կրթական նոյն հաստատութիւնը՝ 1958-1962 եւ 1966-1972 թուականներուն հրատարակած է «Կենաց» տարեգիրքը, իսկ 1963-1965 թուականներուն՝ «Կենաց» եռամսեան:

ՏԱՐԵԳԻՐԻՔ (Էնտինո, Գալիֆ., ԱՄՆ, 1979 թ.) — Սրբոց նահատակաց Ազդարյին նախադրթարանի (հիմնուած՝ 1978 թ.): Հայերէն եւ անգլերէն բովանդակութիւն: Առանց էջաթիւի՝ 24 էջ (22×28 սմ.):

ՏԵՂԵԿԱԳՐՈՒԹԻՒՆ (Գահրէ, Եգիպտոս, 1971 թ.) — Հրատարակութիւն Գալուստեան Հայոց Վարժարանի Ծնողք-Ուսուցիչ Միութեան Յարաբերութեանց Յանձնախումբի: Լուսապատճէնային տպագրութիւն: Առաջին թիւը լոյս կը տեսնէ 1977 թ.ի Փետրուարի 25-ին, 12 էջ (16.5×21 սմ.): Երկրորդ թիւ մը՝ Ապրիլի 7-ին (4 էջ), երրորդը՝ Մայիսի 30-ին (12 էջ), չորրորդը եւ վերջինը՝ Յունիսի 30-ին (16 էջ): Բովանդակութիւնը՝ դպրոցն ու դադութը յուզող հարցեր:

ՏԵՂԵԿԱՏՈՒ (Լաոնազա, Կիպրոս, 1973 թ.) — Հրատարակութիւն Հ.Բ.Ը.Մ.ի Լաոնազայի Մասնաճիւղին: Կը հրատարակուի 1973 թ.ի Հոկտեմբերէն ի վեր: Խմբագիր՝ Կարապետ Փափազեան: Մեքենագիր-բազմադրուած: 30-65 էջ (16.5×21 սմ.): Մինչեւ 1980 թը-ւականի Դեկտեմբերը լոյս տեսած՝ 23 թիւ:

ՏԵՂԵԿԱՏՈՒ (Բարիզ, Ֆրանսա, 1975 թ.) — Պարբերական Ֆրանսահայ Գրողներու Ընկերակցութեան: Խմբագրական կազմ՝ Աւետիս Ալիքսանեան, Եղիշէ Այվազեան, Հրանդ Գուլումճեան, Վարդան Եղիշէեան, Ս. Ք. Զանգու (պատասխանատու խմբագիր), Կարիկ Պասմաճեան, Յակոբ Վէլդիրեան, Գեղամ Քէրէսթէճեան: Առաջին եւ միակ համարը՝ Աշուն 1975 թուակիր: 32 էջ (19×28 սմ.): Հրատարակուիլ կը սկսի որպէս «վեցամսեայ պարբերական»: Իսկ առաջին համարէն ետք՝ 1976 թ.ին կը վերածուի «Արահետ»ի: Նաեւ տես՝ «Արահետ»:

ՏԵՂԵԿԱՏՈՒ (Նիւ Եորք, ԱՄՆ, 1976 թ.) — Ազդարյին, հասարակական, քաղաքական շարաթաթերթ: Հայերէն բաժինը THE ARMENIAN REPORTER շարաթաթերթին: Հրատարակիչ-խմբագիր՝ Էտուրրո Խ. Պողոսեան: Առաջին համարը՝ 1976 թ.ի Յունուարի 1-ին: 8 էջ (29×42 սմ.): Յաճախ՝ էջաթիւի եւ չափի փոփոխութիւն: 1980 թ.ի Նոյեմբերէն՝ 20 էջ (21.5×28 սմ.):

«Անկախ Մամուլի Դերը» խորագրուած առաջին խմբագրականով՝ «Տեղեկատու» կը զրէ:

«Արտասահմանի Հայ գաղթօճախներու անկայուն վիճակը եւ մանաւանդ Լիբանանի վերջին դժբախտ դէպքերը արտասահմանի Հայութեան կարեւոր մէկ մասին ուշադրութիւնը Հիւսիսային Ամերիկայի Հայ գաղութին վրայ պիտի կեդրոնացնէ: Հետեւաբար, այս դա-

ղութին գլխաւոր կարիքներէն մէկն է Հայերէն լեզուով անկողմնակալ թերթի մը հրատարակումը, որպէսզի անկաշկանդ կերպով հայկական կեանքը արտացոլացնէ Սփիւռքահայութեան եւ Հայաստանին հաւասարապէս»:

ՏԵՂԵԿԱՏՈՒ (Մոնթրէալ, Գանատա, 1978 թ.) — (Տես՝ ՆՈՐ ԱՅԳ):

ՏԵՂԵԿԱՏՈՒ (Պէյրութ, Լիբանան, 1978 թ.) — Պարբերաթերթ: Հրատարակութիւն Լիբանանահայ Օգնութեան Ուսչի Շրջանային Վարչութեան: Առաջին համարը՝ 1977-78 թուակիր, 1978 թ.ին: 44 էջ (17×24 սմ.): Խմբագիր՝ Էվա Տէրվիշեան: Երկրորդ համարը՝ 1979-81 թուակիր, 1981 թ.ին: 72 էջ: Խմբագիրներ՝ Սարգիս Մահսերեճեան եւ Էլօ Սարաճեան:

Լ.Օ. Ուսչի Դաստիարակչական Կեդրոնական Յանձնախումբի ստորագրութիւնը կրող «Ինչո՞ւ «Տեղեկատու»» առաջնորդողին մէջ կը յայտարարուի:

«Անհրաժեշտութեան մը ծնունդն է այս Տեղեկատուն:

«Անհրաժեշտութիւն՝ Լիբանանահայ Օգնութեան Ուսչի տարբեր մասնաճիւղերուն եւ անոնց անձնուէր անդամուհիներուն միջեւ տեւական կապ մը հաստատելու:

«Լ.Օ. Ուսչի Տեղեկատուն, որ լոյս պիտի տեսնէ պարբերաբար, արձագանգ պիտի հանդիսանայ կանացի մեր մեծ կազմակերպութեան զանազան մասնաճիւղերուն եւ յանձնախումբերուն գործունէութեան...»:

BULLETIN (du Patriarcat Armenien Catholique) [ՏԵՂԵԿԱՏՈՒ ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ] (Գահիրէ, Եգիպտոս, 1974 թ.) — Հրատարակութիւն Հայ Կաթողիկէ Առաջնորդարանի: Խմբագիր՝ Յովհաննէս Վրդ. Ահմարեան: Թէեւ Փրանսերէն, երկրորդ համարէն սկսած՝ կ'ունենայ հայերէն բաժին: Առաջին համարը լոյս կը տեսնէ 1974 թ.ի Հոկտեմբերին: Ապա՝ Փետրուարին, Մարտին, Ապրիլին, Իսկ վերջինը՝ թիւ 5, լոյս կը տեսնէ Յուլիս-Օգոստոս 1975 թուականով:

ՏԵՂԵԿԱՏՈՒ ՊԱՐԲԵՐԱԹԵՐԹ (Նիւ Եորք, ԱՄՆ, 1973 թ.) — Հրատարակութիւն Ամերիկայի Արեւելեան Թեմի Առաջնորդարանի: Փաստօրէն՝ «Հովուական Նամականի» է, որ լոյս կը տեսնէ «Տեղեկատու Պարբերական» անունով: Առաջին համարը՝ 1973 թ.ի Սեպտեմբերին, երկրորդը՝ Նոյեմբերին: Հայերէն եւ անգլերէն, յաջորդաբար՝ 8 եւ 6 էջ (21×28 սմ.): Նախաձեռնութիւն՝ Գարեգին Արքեպս. Սարգիսեանի:

**ԲԱՖՖԻ ՏԱՐԵԳԻՐՔ** (Թեհրան, Պարսկաստան, 1969 թ.) — Տարեգիրք: Հրատարակիչ-խմբագիր՝ Տաճատ Պողոսեան: Առաջին հատորը լոյս կը տեսնէ 1969 թ.ին եւ կը բաղկանայ 584 էջէ: Երկրորդ հատորը՝ 1970 թ.ին եւ կը բաղկանայ 687 էջէ (17×24 սմ.)<sup>14</sup>: Ունի գրական, պատմաբանասիրական, հայ կեանքի, երգիծական, մահադրական, յորելեանական բաժիններ: Աշխատակիցներ ունի Պարսկաստանէն եւ արտասահմանի այլ դաղութներէն: Արտատպումներ՝ սովետահայ գրողներէ:

«Մեր Ընթերցողներին» խորագրուած մուտքի խօսքով մը՝ «Բաֆֆի Տարեգիրք»ի հրատարակիչ-խմբագիրը կը յայտնէ.

«Հայերէն տարեգրքերի կամ տարեցոյցների հրատարակութիւնը բազմաթիւ տարիների անցեալ ունի:

«Իրանահայ կեանքում գրական այդ սեռը հրապարակ է եկել 1927-ին, Թեհրանում, «Պարսկահայ Տարեցոյց»ով, որի հրատարակութիւնը տեսել է ընդամէնը 4 տարի... եւ դադարել է 1931-ին:

«Այսպիսով, շուրջ 40 տարի յետոյ, Թեհրանում, լոյս է տեսնում Բաֆֆի Տարեգիրքը...»

**ՅՈՒՔ** (Նիկոսիա, Կիպրոս, 1973 թ.) — Աշակերտական պարբերաթերթ Մելգոնեան Կրթական Հաստատութեան: Նախապէս՝ ձեռագիրը, լոյս տեսած է հինգ տարի: 1973 թ.ի Հոկտեմբերի 5-էն սկսեալ «Յուլք» կը հրատարակուի մեքենագիր-բազմադրուած: Առաջին տարին Դոկտ. Յրթ. Էսէկիւլեանի եւ երկրորդ տարին ուսուցիչ Ասատուր Տէվլէթեանի անսնորհուրթեամբ՝ լոյս կը տեսնէ «Յուլք»ի Ց-ական թիւ, շուրջ 50 էջերով (15×20.5 սմ.): Վերջին տարիներուն լոյս կը տեսնէ տարին թիւ մը կամ երկուք, հայերէնի դաստառով՝ Մինաս Գոնճայեանի ղեկավարութեամբ, միշտ աշակերտներէ բաղկացած խմբագրական կազմով մը:

**ՅՈՒՔ** (Ժրնեւ, Զուլիցերիա, 1975 թ.) — Տեղեկատու Զուլիցերիոյ Հայոց Միութեան: «Նոր Շարք»ը կը սկսի 1975 թ.ի Դեկտեմբերին: 24 էջ (21×30 սմ.): Երկրորդ համարը՝ 1976 թ.ի Մարտին (34 էջ), երրորդը՝ 1976 թ.ի Սեպտեմբերին (26 էջ), չորրորդը՝ 1977 թ.ի Յունուարին (66 էջ), եւն.: Հայերէն եւ Փրանսերէն:

**ՅՈՒՔԵՐ** (Պէյրութ, Լիբանան, 1967 թ.) — Ուսանողական Պարբերաթերթ Հայ Աւետ. Շամլեան-Թաթիկեան Երկրորդական Վար-

14. Վկայութեան մը համաձայն, «Բաֆֆի Տարեգիրք»ի երրորդ հատորի (1971) 300 էջը տպագրուած է եւ մնացած է կիսատ: Տաճատ Պողոսեան կը մահանայ 1981 թ.ի Յունուարի 13-ին: (Այս մասին տես՝ «Ասպարէզ», Լոս Անճելըս, 1981 թ.ի Փետրուարի 20-ի համարը):

ժարանի, Պուրճ Համուտ, Նոր Մարաչ: Առաջին տարին՝ 1967 թուականին, լոյս կը տեսնէ երկու թիւ, Յունուար եւ Ապրիլ ամիսներուն, յաջորդաբար՝ 32 եւ 36 էջ (17×24 սմ.): Աշակերտներէ բաղկացած խմբադրական կազմ: Հայերէն եւ արաբերէն: Ապա՝ 1969 թուականէն սկսեալ՝ «Ցուլքեր» կը վերածուի հաստատութեան տարեգիրքի, եւ լոյս կը տեսնէ 1969, 1971-72, 1972-73, 1973-74, 1979-80 տարիներուն, վարժարանի ուսուցիչներուն խմբագրութեամբ եւ հսկողութեամբ: 72-99 էջ (22.5×30 սմ.):

Փիլիսոփայ (Թեհրան, Պարսկաստան, 1979 թ.) — Քաղաքական, հասարակական եւ գրական շարաթաթերթ: Պարսկաստանի վարչակարգի փոփոխութենէն օգտուելով՝ լոյս կը տեսնէ այս շարաթաթերթը: Առաջին համարը՝ 1979 թ.ի Մայիսի 24-ին, բաղկացած է էջէ: Ընդհանրապէս՝ 8 էջ (30×45 սմ.): Արտօնատէր եւ պատասխանատու խմբագիր՝ Ժորժ Համբարչեան:

Իր ուղղութեան մասին՝ «Փիլիսոփայ» կը գրէ.

«Հրատարակելով «Փիլիսոփայ»ը, մենք նպատակ ունենք մեր ուժերի սահմաններում, նպաստել իրանահայութեանը յուզող հարցերի արծարծմանն ու քննարկմանը: «Փիլիսոփայ»ը իրեն համարում է առաջադէմ եւ դեմոկրատական ուժերի զաղափարների եւ կարծիքների արտայայտիչ եւ չի պատկանում որեւէ կուսակցութեան կամ քաղաքական կազմակերպութեան»:

ՓՇԱՊՍԱԿ (Պէյրութ, Լիբանան, 1968 թ.) — Երգիծաթերթ 2 Ե. Ընկերակցութեան Ասպետներու: Լոյս կը տեսնէ, որպէս «Սօսնակ»ի յաւելուած, մէկ թիւ: Խմբագիրներ՝ Վարդգէս Պալեան, Ենուլք Պալիկեան, Գէորգ Քէչիչեան, Գրիգոր Քէօսէեան եւ Պերճ Ֆալկեան: 12 էջ (30×45 սմ.):

ՓՈԹՈՐԻԿ (Պէյրութ, Լիբանան, 1974 թ.) — Պարբերաթերթ Ազգային Գէորգ Չաթալպաչեան Վարժարանի: Ա. տարի, թիւ 1, 1974: Մեքենադիր-բաղմագրուած, 104 էջ (21×32 սմ.): Աշակերտներէ բաղկացած խմբագրական կազմ, հայ գրականութեան ուսուցիչ Կարօ Յովհաննէսեանի առաջնորդութեամբ:

ՓՈԹՈՐԻԿ – Պարբերաթերթ: Ոչ հրատարակութեան վայր, ոչ թուական, ոչ խմբագիր եւ ոչ ալ հասցէ կը յիշատակուի: Բովանդակութենէն դատելով՝ կարելի է հետեւեցնել, որ «Փոթորիկ»ը լոյս կը տեսնէ Սուրիոյ մէջ, հաւանաբար՝ Հալէպ, 1980 թ.ին: Կրնայ նախորդած ըլլալ Սուրիոյ Երիտասարդական Միութեան (ՍԵՄ) «Շանթ» պաշտօնաթերթին: Մեքենադիր-բաղմագրուած: 15 թերթ (21×32.5 սմ.):

«Փոթորիկ»-ի առաջին խմբագրականին մէջ, ի մէջ այլոց, կան հետեւեալ տողերը.

«...Գաղափար մըն էր եւ ահաւաստիկ դարձաւ իրականութիւն: Ունենալ ՍԵՄ-ականներու յատուկ պարբերաթերթ պատիւ է մեզի: Այսօր քանի մը ընկերներու աշխատանքով մէջտեղ եկած, ապագային բոլորիս ջանքերով եւ օժանդակութեամբ պիտի յարատեւէ, վստահ ենք ասոր, որովհետեւ ապարդիւն աշխատանք մը չէ, այլ ամենալաւ ձեւը օգտակար դառնալու»:

ՓՈՐՁԱՆԲ (Իսթանպուլ, Թուրքիա, 1970 թ.) — Գրական-երգի-ծական շարաթաթերթ: Արտօնատէր-խմբագիր՝ Երուանդ Կոպէլեան: Պատասխանատու տնօրէն՝ Մաքրուհի Պիւլիւք-Յակոբեան: Առաջին թիւը լոյս կը տեսնէ 1970 թ. Յունուարի 28-ին: 4 էջ (28·5×41 սմ.): Առաջին հինգ թիւերը լոյս կը տեսնեն կանոնադրաբար, ապա՝ հրատարակութիւնը կ'ընդհատուի մինչեւ նոյն տարուան Նոյեմբերը, երբ վերստին լոյս կը տեսնէ քիչ մը աւելի մեծ ծաւալով եւ դունսաւոր տրպագրութեամբ: Կը դադրի իններորդ թիւէն:

«Ինչո՞ւ այս Փորձանք-ը Իսթանպուլահայութեան Գլխուն» խորագրուած «Վասն խմբագրական»ին մէջ կ'ըսուի.

«[«Փորձանք»ը] լոյս կը տեսնէ յանուն մարդասիրութեան, ... յանուն արդարութեան ու հաւասարութեան, որովհետեւ հաւատացած ենք անկեղծօրէն այն անհրաժեշտութեան, թէ... Իսթանպուլահայն ալ իրաւունք ունի ինդալու եւ պէ՛տք է որ խնդայ»:

ՔԱՋ ՆԱՋԱՐ (Լոս Անճելըս, ԱՄՆ, 1970 թ.) — Երգիծական անկախ ամսաթերթ: Հրատարակութեան սկիզբ՝ 1970 թ. Նոյեմբեր: Հիմնադիր-խմբագիր՝ Յովհաննէս Բալայեան, պարսկահայ, հետեւաբար՝ թերթը լոյս կը տեսնէ պարսկահայերէնով: 8-40 էջ (29×45 սմ.):

«Քաջ Նազար» առաջին խմբագրականին մէջ այսպէս կը բանաձեւէ իր դերը.

«Քաջ Նազարը հրապարակ կ'իջնէ այն համոզումով, որ լուրջ ու ծանր (կշիռքի մասին չէ մեր խօսքը) թերթեր շատ կան եւ ուստի պէտք է քիչ մը թեթեւցնել ծանր մթնոլորտը՝ դայն զուարթացնելով Քաջ Նազարի միջոցով»:

«Քաջ Նազար» կը հանդիսանայ Սփիւռքի մէջ լոյս տեսնող միակ երգիծաթերթը:



## ՅԱԻԵԼՈՒԱԾ

**ԱԶՍԱՏԱԳՐՈՒՄ** (Պէյրութ, Լիբանան, 1980 թ.) — Հրատարակուած թիւն «Արեւմտեան Հայաստանի Ազատագրութեան Ճակատ»ի: Ի մի հաւաքուած՝ քանի մը մեքենագիր-բազմագրուած կոչեր, գրութիւններ, հայերէն, արաբերէն եւ անգլերէն լեզուներով: Ոչ հրատարակութեան վայր, ոչ տեղ, ոչ ալ թուական նշուած է: «Ազատագրութեան թիւ 1-ը, սահմանափակ շրջադաշտութեամբ, հրատարակի վրայ կը տեսնուի 1980 թ.ի ամառը: Երկրորդ համար մը, նոյն ոճով ու ձեւով, կ'երեւի 1980 թ.ի վերջերուն:

[ԱՌԻԹՐԻՉ] **OUTREACH** (Նիւ Եորք, ԱՄՆ, 1978 թ.) — Ամսաթերթ: Հրատարակուած թիւն Ամերիկահայոց Արեւելեան Թեմի Ազգային Առաջնորդարանի: Առաջին համարը լոյս կը տեսնէ 1978 թ.ի Մայիսին: Նախաձեռնութիւն՝ Մեսրոպ Եպս. Ալճեանի: Խմբագիր՝ Յասմիկ Մերկեան: Թէեւ «Աութրիչ» անունը թերթին ճակատին անգլերէն վերտառութեամբ կը տրուի, սակայն անոր բովանդակութիւնը կը կազմեն հաւասարապէս հայերէն եւ անգլերէն գրութիւններ: 4-8 մեծադիր էջ (28×43 սմ.):

Ամերիկայի Արեւելեան Թեմի առաջնորդ՝ Մեսրոպ Եպս. Ալճեան առաջին խմբագրականին մէջ կը գրէ.

«...Մեր առաջնահերթ նպատակն էր ուղղակի կապ մը ստեղծել Ազգ. Առաջնորդարանի եւ մեր բարեպաշտ ժողովուրդին միջեւ եւ յետոյ կապ մը՝ մեր զանազան համայնքներու միջեւ, եկեղեցիէ եկեղեցի կամարուող ծիածանով: Կապ մը՝ որ մնայուն ըլլայ, ուղղակի ըլլայ, եւ որու շնորհիւ հաղորդութեան մէջ ըլլանք մեր ժողովուրդին հետ»:

[ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ] — **PRELACY NEWS** (Նիւ Եորք, ԱՄՆ, 1976 թ.) — Տեղեկատու Ամերիկահայոց Արեւելեան Թեմի Առաջնորդարանի: Առաջին համարը լոյս կը տեսնէ 1976 թ.ի Մայիսին: Ընդհանրապէս անգլերէն, սակայն ունի հայերէն էջեր: 28 էջ (22×28 սմ.):

Առաջին համարին մէջ կ'ըսուի.

«Սոյն տեղեկատու հրատարակութիւնը առաջին փորձ մըն է մեր թեմի հաւատացեալ ժողովուրդը հաղորդակից պահելու Առաջնորդարանի՝ Առաջնորդ Սրբազան Հօր եւ Ազգային Վարչութեան գործունէութեան: Մեր նպատակն է տարին նուազագոյնը երկու նման հրատարակութիւններ ուղարկել մեր թեմի բոլոր հաւատացեալներուն...»:

ԱՍՏՈՒԾՈՅ ՊԱՏԳԱՄԸ (Փաստենա, Գալիֆ, ԱՄՆ, 1977 թ.) — Ամսական հոգեւոր թերթիկ: Հրատարակիչ՝ Վեր. Յովհաննէս Թորո: Կը հրատարակուի 1977 թ.ի Մայիսէն ի վեր: 2 էջ (14×21.5 սմ.)<sup>15</sup>:

ԱՐԱԳԱԾ (Սիտնի, Աւստրալիա, 1979 թ.) — Ամսաթերթ: Հրատարակուի չին Հ.Բ.Ը. Միութեան Մասնաճիւղի: Առաջին համարը՝ 1979 թ.ի Յուլիսին: Հայերէն եւ անգլերէն:

ԱՐԱԳԻԼ (Ուիսալա, Շուէտ, 1980 թ.) — Պարբերաթերթ: Հրատարակուի Մշակութային Միութեան: Մեքենադիր-բաղմադրուած: Կը հրատարակուի 1980 թ.ի վերջերէն: Բովանդակուի լինը կը կազմեն՝ մշակութային լուրեր, դրական էջ եւ հայոց պատմութեան նուիրուած նիւթեր:

Վերջին տարիներուն, յատկապէս Միջին Արեւելքի երկիրներէն եւ մանաւանդ Պարսկաստանէն Ուիսալա հաստատուած հայ երիտասարդներ եւ ուսանողներ կը կազմեն վերոյիշեալ Մշակութային Միութիւնը եւ կը հրատարակեն «Արագիլ»ը:

[ԱՐԾԻԻ] ARDZIV (Յիլատեիֆիա, ԱՄՆ, 1970 թ.) — Տարեդիրք Հայ Գոյրերու [Կաթողիկէ] Վարժարանի (Հիմնուած՝ 1967 թ.ի Հոկտեմբերի 2ին): Պատկերազարդ այս տարեդիրքը լոյս կը տեսնէ 1970 թ.էն սկսեալ: 48-52 էջ (21.5×28 սմ.):

ԲԱՐԵԻ (Իսթանպուլ, Թուրքիա, 1976 թ.) — Բաղաբաղան, հասարակական շարաթաթերթ: Արտօնատէր-հրատարակիչ՝ Անթուան Կիւլիսթանեան, որ նախապէս՝ 1970-72 թթ.ուն լոյս ընծայած էր «Նոր Արդար» շարաթաթերթը: «Բարեւ» շարաթաթերթը լոյս կը տեսնէ 1976-77 թթ.ուն:

ԳԵՂԱՐԳ (Նիւ, Ֆրանսա, 1973 թ.) — Ծիսական պարբերաթերթ՝ կրօնական-ազգային: Խմբագրական կազմ: Սակայն նախաձեռնողն ու խմբագրութեան պատասխանատուն՝ Տարօն Մ. Վրդ. Ճէրէճեան, հոգեւոր հովիւ Նիսի եւ Շրջակայից հայութեան (Սք. Աստուածածին Եկեղեցի): Առաջին համարը լոյս կը տեսնէ 1973 թ.ի Դեկտեմբերի 20-ին: Հայերէն եւ Փրանսերէն: Մեքենադիր-բաղմաղրուած: 20-26 էջ (21×29.5 սմ.): «Գեղարգ»ի հրատարակուի լինը կանոնաւորաբար կը շարունակուի, տարին երեք անգամ լոյս տեսնելով: 1980 թ.ին ան կը դառնայ պաշտօնաթերթը Նիւ-Գոթ տ'Ազիլը ի Հա-

15. Վեր. Յովհ. Թորո, 1976 թ.ի Յուլիսէն ի վեր, նոյն չափով, նոյն ծաւալով եւ գրքէ նոյն բովանդակութեամբ, կը հրատարակէ անգլիատառ քերթիկ մը՝ MESSAGE OF GOD անունով:

յաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ Հայ Համայնքին, միշտ Տարօն  
Ծ. Վրդ. Ճէրէճեանի խմբագրութեամբ: Կը դադրի խմորատիպ ըլլա-  
լէ, լոյս կը տեսնէ գունատիպ եւ դեղատիպ հրատարակութեամբ,  
այս անգամ որպէս եռամսեայ պարբերաթերթ:

ԳԻՐ ՈՒ ԳԻՐՔ (Նիւ Եորք, ԱՄՆ, 1970 թ.) — Պարբերաթերթ:  
Հրատարակութիւն Հայ Գրականութեան Բարեկամներու: Խմբագիր՝  
Խաչատուր Ն. Մակարեան: Հրատարակութեան սկիզբ՝ 1970 թ.<sup>16</sup>:  
36-70 էջ (21.5×28 սմ.): 1972 թուականի բացառիկ համարէն (թիւ  
9-12, 210 էջ) սկսեալ՝ «ԳԻՐ ՈՒ ԳԻՐՔ. Պարբերաթերթ Հայ Գրա-  
կանութեան Բարեկամներու Միութեան»:

Պարբերաթերթը իր առաջադրութիւններուն մասին կը գրէ.

«Գիր ու Գիրք» պարբերականը հայ գրական ածուին մէջ պիտի  
բանայ իր էջերը հետեւեալ զլխաւոր առաջադրութիւններով.

«1. Հետեւիլ կեանքի կոչուած գրական երեւոյթներուն, Հա-  
յաստանի թէ Արտասահմանի մէջ:

«2. Ստեղծել գրական մթնոլորտ, մտաւորականներ եւ գրա-  
սէրներ իրարու մօտ բերելով:

«4. Յուշակագրել բոլոր հին ու նոր հրատարակութիւնները...:

«5. Քաջալերել հայ գրողը: Վաճառումի լայն միջոցներով սա-  
տարել անոր գործերուն տարածումին ու սպառումին:

«6. Գրական մրցանակներ հաստատել...»:

ԳՈՅԱՄԱՐՏ (Հոլիվուտ, Գալիֆ., ԱՄՆ, 1979 թ.) — Ազգային-  
հասարակական, գրական, պատմագրական ամսօրեայ հանդէս: Խմբա-  
գիր՝ Նորայր Մամեան: Հրատարակիչ՝ Նորիկ Գրիգորեան: Ապա՝  
Խմբագիր եւ հրատարակիչ՝ Նորայր Մամեան: Առաջին համարը լոյս  
կը տեսնէ 1979 թ.ի Յուլիսին: 28 էջ (21.5×28 սմ.): Առաջին տարին՝  
12 համար (թիւ 11-12-ը՝ միացեալ): Բ. տարին չամբողջացած, խմբ-  
ագրին մահով՝ «Գոյամարտ» կը դադրի: 28-46 էջ: Աշխատակիցնե-  
րու շարքին կը հանդիպինք Բիւզանդ Կոստանանի, Պօղոս Գուբելեանի,  
Արմէն Տօնոյեանի, Զուլիեա Գրիգորեանի, Նորայր Մամեանի ա-  
նուններուն:

«Մեր Խօսքը» խորագրուած «Գոյամարտ»ի առաջին խմբագրա-  
կանը կը հաստատէ.

«Արեւելահայերէնով հրատարակուող մի պարբերականի կարի-  
քը վաղուց զգալի էր հայահոծ Լոս-Անջելըսում, որտեղ վերջին երես-

16. Հայ Գրականութեան Բարեկամներու Միութիւնը, 1956-1960 թթ.ում լոյս  
ընծայած է «Հաղորդագրութիւն» պարբերաթերթը, որում հրատարակութեան 14-րդ  
տարին ան կը դառնայ «Գիր ու Գիրք»:

նամեակում ... կենտրոնացել են բազմաճաղար արեւելախօս, հայա-  
չունչ եւ հայրենաչունչ հայրենակիցներ, եկած Հայաստանից, Խ.  
Միութեան դանազան մասերից եւ արեւելախօս Իրանից, շարունակա-  
կան ալիքներով:

«Գոյամարտ» անուանեցինք մեր հրատարակութիւնը, քանի որ  
իրօք ծանր ու դժուարին դոյամարտ է մղում տարասփիւռ հայութիւ-  
նը ներկայիս, ցրուած աշխարհի չորս կողմը, զրկուած հայրենի հող  
ու ջրից եւ կենսական աւելից, օտար ու խորթ հորիզոնների տակ, ու-  
ծացման, ալլասերման, ապաղգայնացման՝ «սպիտակ ջարդ»-ին մը-  
տապէս ենթակայ:

ԵԿԵՂԵՑԻՆ ՀԱՅԿԱԿԱՆ (Բարից, Ֆրանսա, 1979 թ.) — Ե-  
ռամսեայ տեղեկատու: Հրատարակութիւն Ֆրանսայի Հայ Կաթողիկէ  
Առաջնորդարանի: Հրատարակութիւնը կը սկսի՝ 1979 թուականի կէ-  
սին. «Նոր Շրջան», թիւ 1, Գ. Եռամսեայ, 1979»: «Նոր Շրջան» կը  
համարուի, քանի որ նախապէս, 1959-1971 թուականներուն, Կարա-  
պետ Եպս. Ամատունի՝ նոյն անունով եւ նոյն բովանդակութեամբ հը-  
րատարակած էր հանդէս մը:

«Եկեղեցին Հայկական»ը վերակենդանացնողն է՝ Գրիգոր Եպս.  
Ղապրոյեան: Հրատարակութեան պատասխանատու՝ Փ. Տէտէեան:  
Հայերէն եւ ֆրանսերէն բովանդակութիւն: 44-52 էջ (14.5×20.5  
սմ.):

ՁԱՐԹՕՆԲ (Ուոլթեմ, Մասաչուսեց, ԱՄՆ, 1972 թ.) — «Հայ  
Եկեղեցւոյ Ձայն»ի պարբերաթերթ: Խմբագիր-հրատարակիչ՝ Արամ  
Աւազ Սարկաւազ Ստեփանեան: Թէեւ անթուակիր՝ առաջին համարը  
լոյս կը տեսնէ 1972 թ.ին: Հայերէն եւ անգլերէն: Հոդուոր թերթ: 8  
էջ (13.5×21 սմ.):

ՁՄՄԱՌԵԱՆԻ Ի ՍՓԻՒՌՍ ԱՇԽԱՐ ՀԻ (Ձմառ, Լիբանան, 1980  
թ.) — Հոդուոր եւ հովուական հանդէս: Հրատարակութիւն Ձմառ-  
եան Միարանութեան: Խմբագրական մարմին՝ Մանուէլ Ծ. Վրդ. Պա-  
թազեան, Անդրանիկ Վրդ. Կոստեան, Մեսրոպ Վրդ. Ճուրեան, Կո-  
միտաս Վրդ. Պէօճիւքեան, Յովսէփ Վրդ. Քէլէկեան, Պօղոս Վրդ.  
Գաղանձեան, Եղիա Վրդ. Եղիայեան: 1980 թուականին լոյս տեսած  
միակ համար մը՝ Ապրիլի թուականով: 32 էջ (22×28 սմ.)<sup>17</sup>:

17. 1981 թ.ի Մարտին լոյս կը տեսնէ վերոյիշեալ պարբերաթերթին երկ-  
րորդ համարը, բաղկացած 36 էջէ (21×27 սմ.): Թէեւ կը պահուի պարբերաթերթին  
նախկին անունը, սակայն աւելի մեծ չափերով կ'աւելնայ նոր անունը. «ՁՈՒԱՐԹ-  
ՆՈՑ. հոգեւոր եւ հովուական հանդէս»:

Խմբագրական կազմի անուններն ու հանդէսին բնոյթը սահմանող բացա-

«Կապը...» խորագրուած առաջնորդող յօդուածին մէջ կը պարզուի այս պարբերաթերթին նպատակը.

«Մեր նպատակը՝

ոչ պարբերաթերթ, ոչ ալ տարեգիրք հրատարակել է:

«Այլ պարզապէս՝

սիրոյ կապը ամրացնել Մայր Տան եւ ի սփիւռս աշխարհի

Տիրոջ այգիին մէջ վաստակող մեր ՄԻԱԲԱՆ եղբայրներուն միջեւ»:

ԼՈՒՍՍԻՈՐԻԶ (Մոնթրէալ, Գանատա, 1978 թ.) – Համայնքային ամսաթերթ Սբ. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցիի: Լոյս կը տեսնէ 1978 թ.էն ի վեր: Խմբագրական կազմ: Մեքենագիր-բաղմագրուած: 8-12 էջ (21.5×27.5 սմ.):

ԼՐԱՏՈՒ ԱՄՍԱԹԵՐԹ (Հոլիվուտ, Գալիֆ., ԱՄՆ, 1978 թ.) – Ս. Կարապետ Հայց. Առաքելական Մայր Եկեղեցիի: Խմբագիր՝ Եկեղեցիի հովիւ Վաչէ Քահանայ Նազդաշեան: Առաջին համարը՝ միացեալ թիւ մը՝ «Յունուար-Փետրուար-Մարտ 1978» թուակիր: 28 էջ (14×22 սմ.): Բովանդակութիւնը կը կազմեն Եկեղեցիին առօրեան, Հիւսիսային Ամերիկայի Արեւմտեան Թեմի Առաջնորդարանի գործունէութիւնը եւ լուրերը, ինչպէս նաեւ շրջանի կրթական կեանքը:

տրուքիւնները առնուած են այս երկրորդ համարէն: Հրատարակուած՝ Պէյրուք, սպ. Տօնիկեան:

## NEW ARMENIAN PERIODICALS OF THE ARMENIAN DIASPORA (1967-1980)

JIRAIR TANIELIAN

### (Summary)

In the last decade approximately two hundred new periodicals started to be published in the Armenian Diaspora. The reasons behind this are: the new waves of Armenian migration from the Middle East to Europe and the U. S. A.; the revolutionary tendencies among the Armenian new generation, especially after the year 1965; the revolution in Iran; and the trend of returning to Armenian national roots.

The list of new periodicals has been prepared in alphabetical order. The first part of the list was published in the previous issue of the Review; the second part is presented in this article.